

ԱԼԵՔՍԱՆ ՀԱԿՈՒՅԱՆ

ՄՈՎՍԵՍ ԿԱՂԱՆԿԱՏՎԱՅՈՒ «ԱՂՎԱՆԻՅ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ»  
ՉԵՌԱԳՐԵՐԸ

«Աղվանից պատմության» (այսուհետև՝ ԱՊ) 1860 թ. լույս տեսած առաջին երկու հրատարակությունները ձեռագրերի համեմատության միջոցով Մովսես Կաղանկատվացու (Գասխուրանցու) երկի սկզբնագրի վերականգնման խնդիր չեն ունեցել: Մոսկովյան հրատարակությունը հիմնված էր ընդամենը երկու, իսկ փարիզյանը՝ շորս ձեռագրերի վրա<sup>1</sup>:

Առաջինը ԱՊ ձեռագրերի լիարժեք բնութիւնը զբաղվել է Խ. Գաղյանը, որը «Արարատ» ամսագրում հրատարակած իր հոդվածաշարում մանրամասն նկարագրել է Կաղանկատվացու երկի՝ էջմիածնի մատենադարանում պահպանվող հինգ ընդօրինակությունները և նրանց բնագրագիտական համեմատության շնորհիվ կատարել էական ընդհանրացումներ<sup>2</sup>: Մասնավորապես նա պարզել է, որ ԱՊ հայտնի ձեռագրերը բաժանվում են երկու խմբի, ընդ որում առաջին խմբի մայրը 1289 թ. Հովհաննավանքում կատարված ընդօրինակությունն է:

Մի բանի տարի անց Մեսրոպ Տէր-Մովսիսյանն իր այդպես էլ չհրատարակված «Ընդհանուր ցուցակում» համառոտ նկարագրել է ԱՊ աշխարհի զանազան գրադարաններում պահպանվող 26 գրչագիր (իրապես՝ 25, բանի որ մեկը թյուրիմացաբար կրկնվում է), ընդ որում, ըստ երևույթին՝ պատահակաւորեն, 1289 թ. հնագույն ընդօրինակությունը ցուցակում չի արձանագրվել<sup>3</sup>:

Հենվելով Ա. Ժազիսում «հանդրատանաց» բառի տարբերակումների վրա, Հր. Աճառյանը էջմիածնի մատենադարանում պահվող ԱՊ 8 ձեռագրերը բաժանել է երեք խմբի<sup>4</sup>: Սակայն, ինչպես ստորև կտեսնենք, նրա առանձնացրած

<sup>1</sup> Մովսեսի Կաղանկատվացույ Պատմութիւն Աղուանից աշխարհի: Ի լույս բնծայեաց Մէրտիչ էմին, Մոսկվա, 1860 (այսուհետև՝ էմին), էջ 01; Պատմութիւն Աղվանից արարեալ Մովսիսի Կաղանկատվացույ: Ի լույս բնծայեաց հանդերձ ծանօթութեամբ Կ. Վ. Շահնազարեան, Փարիզ, 1860 (այսուհետև՝ Շահն.), հ. Ա, էջ 85:

<sup>2</sup> Խ. Վ. (Խաչիկ վարդապետ Գաղեան), Մովսէս Կաղանկատվացույ Աղուանից պատմութեան Մայր Աթոռոյս մատենադարանում գտնուած ձեռագիր օրինակները, «Արարատ», 1895, էջ 235—238, 333—338, 388—390, 424—426; Եւոյնի՝ նիւթեր ուսումնասիրութեան Աղուանից պատմութեան, «Արարատ», 1896, էջ 22—26, 67—71, 125—128, 176—179, Եւոյնի՝ նիւթեր Աղուանից պատմութեան ուսումնասիրութեան համար, «Արարատ», 1897, էջ 67—70, 161—163 (այսուհետև՝ Գաղյան, 1895, 1896, 1897):

<sup>3</sup> Մեսրոպ Մազիստոս Տէր Մովսիսեան, Ընդհանուր ցուցակ հայերէն ձեռագրաց, Մատենադարանի անտիպ ձեռագրացուցակների հավաքածու, № 133, Մատենագիրներ, թղթ. 3, էջ 1550—1553:

<sup>4</sup> Հր. Աճառյան, Հայերէն արժատական բառարան, հ. 9, Երևան, 1977, էջ 40—41:

առաջին խմբի օրինակները (ձ<sub>1</sub> և ձ<sub>2</sub>) իրականում պատկանում են Ա խմբի ենթախմբերից մեկին:

ԱՊ-ը հանգամանորեն քննած Ն. Ակինյանը թվարկել է իրեն հայտնի 25 ձեռագիր (իրապես՝ 22, քանի որ երեքը թյուրիմացաբար կրկնվում են) և նշել յուրաքանչյուրի պատկանելությունը Ա կամ Բ խմբին (երբեմն՝ սխալ)<sup>5</sup>:

Չ. Դովսեթը ԱՊ անդլերեն թարգմանությունը կատարել է 9 ձեռագրերի համեմատությամբ, ձեռքի տակ ունենալով նաև էջմիածնի մատենադարանի 4 օրինակների տարբերակների ցանկերը, որոնք ԱՊ մի շիրականացած հրատարակության համար կազմել էր Խ. Դադյանը<sup>6</sup>: Վերջինս 1926 թ. այդ ցանկերը նվիրել էր Ն. Ակինյանին<sup>7</sup>, իսկ այժմ դրանք պահվում են Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարանում: Թարգմանության առաջաբանում Չ. Դովսեթը կանգ է առել ԱՊ ձեռագրերի Ա և Բ խմբերի առանձնահատկությունների վրա՝ հիմնականում հետևելով Խ. Դադյանին և Ն. Ակինյանին<sup>8</sup>:

Մի քանի տարի առաջ ԱՊ գրչագրերի ճյուղագրությունը կազմելու փորձ է կատարել Ֆ. Մամեդովան<sup>9</sup>: Սակայն, ծանոթ չլինելով ձեռագրերի մեծագույն մասին, նա ստիպված է եղել բավարարվել գրականության մեջ արձանագրված փաստերը ի մի բերելով: Արդյունքում՝ առանձին փաստերի ոչ ճիշտ ընկալումը և որոշ չհաշտղված ենթադրություններ ուսումնասիրողին բերել են մի շարք լուրջ սխալների, որոնք անարժեք են դարձնում առաջարկված ամբողջ համակարգը:

Բոլորովին վերջերս լույս տեսավ ԱՊ նոր՝ համեմատական բնագիրը<sup>10</sup>: Աշխատասիրող Վ. Առաքելյանը այն կազմել է իր ձեռքի տակ եղած 15 ձեռագրերի, մի քանի ձեռագրական հատվածների և ԱՊ նախորդ հրատարակությունների համեմատությամբ<sup>11</sup>: Տողատակում տրված մանրամասն տարբերությունները հնարավորություն են ընձեռում ծանոթանալ գրեթե բոլոր կարևոր ձեռագրերի ընթերցվածքներին: Այդպիսով ծածկվում են այն մասնակի սխալները, որ տեղ-տեղ հայտնվել են նոր բնագրում՝ սկզբնագիրը վերականգնելու փորձերում ոչ ճիշտ հետևողական լինելու պատճառով (մի շարք դեպքերում շարդարացված կերպով բնագիր են մտցվել ընթերցումներ այնպիսի ընդօրինակություններից, որոնք ծագում են աշխատասիրողի ձեռքի տակ գտնված ավելի հին գրչագրերից, ընդ որում վերջիններիս մեջ այդ ընթերցումները բացակայում են): Վ. Առաքելյանը թվարկում է նաև իր ձեռքի տակ չեղած 16 ձեռագիր (իրականում՝ 14, որովհետև նախորդներից երկուսը թյուրիմացա-

5 Ն. Ակինյան, Մովսես Դասխուրանցի (կոչուած Կաղանկատուացի) և իր Պատմութիւն Աղուանից, Վիեննա, 1970, էջ 5—14:

6 The History of the Caucasian Albanians. By Mouses Dasxurançi. Translated by C. J. F. Dowsett, L., 1961, p. XI—XIV.

7 Ն. Ակինյան, նշվ. աշխ., էջ 12:

8 The History, p. XIV:

9 Փ. Мамедова, «История албан» Моисея Каланкатуийского как источник по общественному строю раннесредневековой Албании, Баку, 1977, с. 14—32.

10 Մովսես Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի: Քննական բնագիրը և ներածությունը՝ Վարդգ Առաքելյանի, Երևան, 1983 (այսուհետև՝ Կաղանկատուացի):

11 Նույն տեղում, էջ 17-18:

բար կրկնվում են) և տալիս դրանց համառոտ նկարագրությունները<sup>12</sup>: Ցավոք, ծանոթ լինելով ԱՊ երեք տասնյակ ձեռագրերի, ուսումնասիրողը չի ձեռնարկել նրանց ծագումնաբանության և ճյուղագրության կատարյալ քննությանը, իսկ ձեռագրերի նկարագրությունը կատարել է առանց հետևողական սկզբունքի:

Նկատի ունենալով ԱՊ առկա ընդօրինակությունների ծագումնաբանության ճշտման և ճյուղագրության կազմման կարևորությունը, ստորև փորձում ենք լուծել այդ հարցը: Ընդ որում, տեղի սղություն պատճառով ձեռագրերը մանրամասն չենք նկարագրում և անդրադառնում ենք հիմնականում միայն նրանց ծագումնաբանության հարցերի լուծմանը նպաստող տվյալներին: Ձեռագրերը նշանակում ենք նույն տառանիշերով, ինչ որ ունի Վ. Առաքելյանի հրատարակությունը: Որոշ կարևոր օրինակների համար առաջարկում ենք լրացուցիչ տառանիշեր:

ԱՊ ձեռագրերի Ա խումբ:

ՄՄ ձեռ. № 1531 (a): Երկաթագիր<sup>13</sup>: Սկզբից պարունակում է Սոկրատ Սքոլաստիկոսի Եկեղեցական պատմությունը: ԱՊ-ը սկսվում է 231ա էջում և ավարտվում 377ա էջի 1-ին սյունակում: Ընդօրինակվել է Հովհաննավանքում վանահայր Համազասպ Մամիկոնյան Եպիսկոպոսի պատվերով: Սոկրատի պատմությանը հաջորդող հիշատակարանում ասվում է. «Այս պատմութիւն իմաստասիրական ոչ գոյով ի սուրբ մենաստանիս, ի վանս Յովհաննու, ես՝ Տէր Համազասպս, բազում թախանձանաւք ի խնդիր էի, զի յետ իմ մնասցէ ինձ ընծայ, ընդ մեծամեծս ի սուրբս այս Սիովն կաթողիկէի: Արդ աղաչեմ զձեզ, մանգունք սուրբ առագաստի, հայցեալ ի Քրիստոսէ գթողութիւն հանցանաց մերոց, եւ ինձ՝ եղկելի գրչիս»<sup>14</sup>: Գրիչը բազմաթիվ հիշատակագրություններ է թողել, սակայն առանց իր անվան հիշատակման: Ընդօրինակությունը կատարվել է 1289 թ., ինչպես երևում է 306բ էջի հիշատակարանից. «Աւաղ մեծի աղետիս եւ անմխիթար սգոյս, որ եհաս տանս Վրաց եւ քրիստոնէից, զի սպանաւ թագաւորն Դէմէտրէ յաղզէն նետողաց, ոչինչ մահու պարտական, ի սահմի ամսոյ, եւ էր թիւն ԶԼԸ: Եւ ահա ի մեծի վտանգի կանք...»: Հայոց ԶԼԸ թվականի սահմի ամիսն ընկնում է 1289 թ. մարտի 9-ից մինչև ապրիլի 7-ը<sup>15</sup>:

Հայոց ՌՃԻԵ (1676) թվականին այս ձեռագիրը Հովհաննավանքում նորոգվել է Աթանաս գրչի և «աշխատող հնացեալ գրոցս» Զաբարիայի կողմից (վերջինս պատմիչ Զաբարիա Քանաքեոցին է): Նորոգման մասին հիշատակարանը պահպանվել է վերջին էջում (377բ<sub>2</sub>): Նորացվել են 343, 351, 352, 362 և

<sup>12</sup> Նույն տեղում, էջ ԵԱ-ԵԲ:

<sup>13</sup> Մանրամասն նկարագրությունը տե՛ս Դադյան, 1895, էջ 235—238; Սոկրատայ Սոկլաստիկոսի Եկեղեցական պատմութիւն, քարգմանեաց Փիլոն Տիրակացի եւ Պատմութիւն վարուց սրբոյն Սեղրեսարոսի Եպիսկոպոսին Հռովմայ, քարգմանեալ Աբասուն Գրիգորի Զորախորեցոյ: Աշխատասիրութեամբ Մեսրոպ վ. Տէր Մովսէսեան, Վաղարշապատ, 1897, հ. Ա, էջ ԺԸ-ԻԳ:

<sup>14</sup> էջ 230բ<sub>2</sub>: Հոգվածում ամենուր ընդգծումները մերն են—Ա. Հ.:

<sup>15</sup> Բ. Ե. Թումանյան, Հայ աստղագիտության պատմություն, Երևան, 1968, էջ 278: Դեմետրեն սպանվել է մարտի 12-ին, տե՛ս «Վրաց ժամանակագրություն» (1207—1318): Քարգմանությունը հին վրացերենից, առաջարանը և ծանոթագրությունները Պարույր Մուրադյանի, Երևան, 1971, էջ 158:

374—377 թերթերը: Հին, ըստ երևույթին խիստ մաշված թերթերի բնագիրը բոլորգրով ընդօրինակվել է նոր թերթերի վրա: Հին բնագրի խունացածության պատճառով ընդօրինակության մեջ սխալներ ու պակասներ կան: Բացի այդ, նորոգման ընթացքում պատահաբար դուրս է ընկել ձեռագրի թերթերից մեկը (ներկայիս 371 և 372 թերթերի միջև)՝ Ա.Պ. Գ, ի գլխից մի հատվածով<sup>16</sup>:

1760 թ. Հայոց կաթողիկոս Հակոբ Շամախեցու հրամանով այս ձեռագիրը տարվել է էջմիածին, և Ղունկիանոս Աշտարակեցի դպիրը Ա.Պ.-ից ընդօրինակություն է կատարել (ց ձեռագիրը): Խ. Գաղյանի կարծիքով հենց Ղունկիանոսն է, որ ձ ձեռագրի 236ա<sub>2</sub>, 359բ<sub>1-2</sub> և 375բ<sub>2</sub> էջերում քերել է գիրը և նույն երկաթագրով գրել բոլորովին այլ տեքստ՝ այն, որ առկա է այժմ և որն անցել է Ձ-ից կատարված բոլոր ընդօրինակություններին՝ սկսած Ղունկիանոսի (ց) ձեռագրից<sup>17</sup>: Չ. Գովսեթը նշում է, որ իրեն չի հաջողվել գտնել որևէ փաստ այն մասին, թե նշված միջամտության հեղինակը հենց Ղունկիանոսն է<sup>18</sup>: Սակայն, ինչպես էլ մտածենք, պարզ է, որ դա կատարվել է 1730-ական թթ. հետո, քանի որ ի ձեռագրի ընդօրինակման ժամանակ հնագույն ձեռագիրը զերծ է եղել այդ թերությունից<sup>19</sup>:

Ձեռագիրը հարուստ է քերականական սխալներով: Նույնատիպ սխալներն առկա են նաև գրչի թողած հիշատակագրություններում, ուստի պետք է ենթադրել, որ դրանք Ա.Պ. մաշր օրինակից շեն բխում, այլ հատուկ են ձ ձեռագրի գրչին: Սխալների բնույթից կարելի է ենթադրել նաև, որ ձեռագիրը գրվել է թելադրությամբ (Կպիսկոպոս, Կպարթոսութեանն, Ողիմպիաաումն, ընծայ,

<sup>16</sup> Խ. Գաղյանը, որն առաջինն է նկատել նշված պակասը, հրատարակել է այդ հատվածը ըստ Բ խմբի երկու ձեռագրերի (Գաղյան, 1897, էջ 161—163):

<sup>17</sup> Գաղյան, 1897, էջ 70:

<sup>18</sup> The History, p. XIV, n. 7.

<sup>19</sup> Խ. Գաղյանը, նրան հետևելով նաև Չ. Գովսեթը և Յ. Մամեդովան, Ղունկիանոսի արարքը բնորոշում են որպես Ա.Պ. հնագույն բնագրի գիտակցված կեղծում և խեղաթյուրում՝ էջմիածնի և Գանձասարի կաթողիկոսությունների պայքարում երկրորդի գիրքերը թուլացնելու նպատակով (Գաղյան, 1897, էջ 70; The History, p. XIV; Փ. Մամեդովա, ԿԱՅ. ՏՈՎ., շ. 27—32): Սակայն Ա.Պ. Գ, ր գլխի աղբյուրի՝ Պարտավի 704 թ. ժողովի ընդունած որոշման հայտնաբերումից հետո պարզ դարձավ, որ իրողությունն այլ է: Համեմատությունից հստակորեն երևում է, որ, արտագրելով հիշյալ որոշման բանաձևը, Մովսես Կաղանկատվացին, ելնելով իր նպատակներից, փոփոխել է մի կարևոր հատված: ԺԸ դարում Ղունկիանոսը նկատել է Ա.Պ. Գ, ր գլխի հատվածի և նրա աղբյուրի տեղեկությունների այդ հակասությունը և, ենթադրելով, թե խեղաթյուրումը կատարվել է «գերիմաստ վարդապետ» Կաղանկատվացուց հետո, «Աղվանից սեպուխանների» կողմից, իրեն իրավունք է վերապահել «վերականգնել» սկզբնագիրը (մանրամասն տե՛ս Ա. Հ. Հակոբյան, Ծղիա Արճիշեցի կաթողիկոսի նորահայտ թուղթը, ՊԲՀ, 1981, № 4, էջ 143—148): Ա.Պ. Ա, Թ-ում ևս Ղունկիանոսի «վերականգնումը» կատարված է սկզբնաղբյուրի հիման վրա. այս անգամ աղբյուրը Անանիա Մոկացու «Յաղագս ապոստամբութեան ատեն Աղուանից» երկի նույն բովանդակությունն ունեցող հատվածն է: Ինչ վերաբերում է Գ, ի գլխին, ապա այնտեղ Աղվանից առաջին կաթողիկոսների՝ Կաղանկատվացու որդեգրած հեթանոսությունն այնքան ակունք հայտ սխալ է պարունակում, որ արդեն ԺԳ դարում Կիրակոս Գանձակեցին կասկածել է դրան, իսկ Մխիթար Այրիվանեցին ուղղակի Գրիգորիսին գրել է Շուփհաղիշոյից առաջ: Որ Ղունկիանոս դպրի արարքը ոչ թե թեմական պայքարի շահերով պայմանավորված խեղաթյուրում է, այլ բնագրագիտական աշխատանք, երևում է նաև նրանից, որ Կաղանկատվացու անհավաստի տեղեկություններ պարունակող բազմաթիվ այլ հատվածներ թողնվել են անխաթար Իհարկե, Ա.Պ. սկզբնագրի մասին ԺԸ դարի բնագրագետի տեսակետի հետ դժվար է համաձայնել, և եթե մեզ հետաքրքրողը ոչ թե Ը դարի իրողություններն են, այլ Կաղանկատվացու սկզբնագիրը, ապա պիտի կանգ առնենք Բ խմբի և ի ձեռագրի անխաթար ընթերցումների վրա:

կանք, մանգունք): Քելլադրոդը, հավանաբար, հիշատակագրություններից շորսում հիշվող Գրիգորէս կրօնավորն է (օրինակ՝ էջ 265ա<sub>2</sub>-ում «Աստանաւր չիշեսչիք զսրբազան էպիսկոպոսն զՏէր Լամազասպ, որ եղև ստացաւդ գրոցս, եւ զԳրիգորէս կրանաւոր, թէ ճար կա՛ եւ զմեղապարտ գրիչս»): Հմմտ. նաև էջ 123բ<sub>1</sub>, 149ա<sub>1</sub>, 172ա<sub>1</sub>): Ձ-ից ընդօրինակողները ուղղել են սխալները:

Ձ ձեռագրից ծագում են բազմաթիվ ընդօրինակություններ, որոնք Ձ-ի հետ միասին կոչվում են ԱՊ ձեռագրերի Ա խումբ:

Անթիլիասի Լայոց կաթողիկոսարանի մատենադարանի ձեռագիր № 75 (h): Մանրածապավենը պահպանվում է Մաշտոցի անվ. Մատենադարանում (№ 760): Գեղեցիկ բոլորգիր, գրիչն՝ անհայտ, տեղը՝ ամենայն հավանակալությունամբ՝ Լովհաննավանք<sup>20</sup>: Միակ հիշատակագրությունը 47բ էջում է. «Զստացող գրոյս՝ զերջանիկ հայրապետն Տէր Աբրահամ կաթողիկոսն ամենայն Լայոց»: Հիշված կաթողիկոսը կա՛մ Աբրահամ Բ Խոշաբեցին է (1730—1734), կա՛մ Աբրահամ Գ Կրետացին (1734—1737): Ըստ այսմ, ձեռագիրը պետք է գրված լինի 1730—1737 թթ. ընթացքում: Այն օրինակված է Ձ-ից և նրա նկատմամբ գրեթե շեղումներ չունի<sup>21</sup>: h-ի կարևորությունը նրանում է, որ, արտագրված լինելով Ձ-ից Ղունկիանոսի «վերականգնումներից» առաջ, ձեռագիրը պահպանել է մայր օրինակի սկզբնական ընթերցումները Ա, Բ, Գ, Ը և Գ, ից գլուխներում: h-ի պահպանած այդ հատվածները վերջնականապես հաստատում են Խ. Դադյանի տեսակետն այն մասին, որ Ղունկիանոսից առաջ Ձ-ն նշված տեղերում ունեցել է նույն ընթերցումները, ինչ որ Բ խմբի ձեռագրերը:

#### Աց ենթախումբ:

ՄՄ ձեռ. № 2646 (g): Նոտրգիր: Ընդօրինակվել է էջմիածնում, Լայոց կաթողիկոս Լակոբ Շամախեցու պատվերով Լովհաննավանքից բերված ձեռագրից (a)<sup>22</sup>: Վերնագիրն է «Գիրք պատմութեան Աղուանից աշխարհին. ի յերիս հատորս բաժանեալ. շարագրեցեալ ի Մօսիսէ զերիմաստ վարդապետէ Կաղանկատացոյ. ի վաղնչուց ժամանակաց. ի փառս Աստուծոյ»: Գրիչ Ղունկիանոս դպիրը թողել է բազմաթիվ հիշատակագրություններ: Ձեռագրի վերջում, մի ընդարձակ հիշատակարանում (էջ 330ա—331բ) ասվում է մասնավորապես հետևյալը. «Եւ էր թուականս մեր ՌՄԺ (1761—Ա. Ը.), յսկզբան ամսոյն Յունվարի յորում սկսայ գրել, յոր և գրեալ բազմաւ ջանիւ և մեծաւ աշխատակրութեամբ և մանաւանդ ցրտանալով ի նոյնում թականիս և ի մարտի ամսոյ Ժ-ումն զրաւեցի հաջողութեամբն Աստուծոյ»: Այստեղ Ղունկիանոսը երևի մի փոքր շփոթում է, քանի որ այլ փաստերից երևում է, որ օրինակումն սկսվել է 1760 թ.: Այսպես, 85ա էջում ԱՊ Ա գրքի բնագրից հետո գրված է

<sup>20</sup> Մանրամասն նկարագրությունը տե՛ս Ա. Սիւմէլեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Լայլայի և Անթիլիասի և մասնաւորաց, հ. Բ, Լայլայ, 1936, էջ 150—151; Ա. Դանիլեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան, Անթիլիաս, 1984, էջ 294: 1932 թ. Անթիլիաս տեղագիտական շրջանային ձեռագրերը պատկանել է կոստանդնուպոլսեցի Լովհաննես Մկրտչան քահանային (Ա. Դանիլեան, նշվ. աշխ., էջ Թ, ԺԲ) և որպէս այդպիսին նկարագրվել է Մեսրոպ Մագիսարոսի կողմից (նշվ. աշխ., էջ 1553): Մեսրոպ Մագիսարոսը և Վ. Առաքելյանը սխալմամբ հիշատակում են թե՛ h-ը, թե՛ Մկրտչան քահանայի ձեռագիրը (Մեսրոպ Մագիսարոս, նշվ. աշխ., էջ 1553; Կաղանկատացի, էջ 12, ԽԲ):

<sup>21</sup> Դեռևս Չ. Գովսեթը նկատել է, որ h-ը Ա խմբի ձեռագիր է, և ոչ թե՛ Բ, ինչպէս կարծում էր Ա. Սյուրմեյանը (The History, p. XII, n. 1):

<sup>22</sup> Մանրամասն նկարագրությունը տե՛ս Դադյան, 1895, էջ 333—335:

«1209», որը, եթե վերածենք ըստ Հայոց թվականի, կտա 1760 թիվ (13.09.1759—11.09.1760): Իսկ 263 էջի հիշատակագրությունն ասում է. «1210 և ի լունվարի Գ.ին: Կատարեցաւ և գտեղի էառ երկրորդ հատար Պատմութեանս Ազունից»: Դժվար է մտածել, թե Ա.Պ երկու գրքերն ընդօրինակվել են հունվարի առաջին շորս օրվա ընթացքում, այն դեպքում, երբ ամբողջ օրինակումն ավարտվել է մարտին:

Ա.Պ բնագրից անմիջապես հետո գրիչը գետեղել է Կիրակոս Գանձակեցու Պատմութեան Ժ գլխի՝ ԺԲ—ԺԳ դարերի Ազգանից կաթողիկոսների մասին պատմող հատվածը «Զներքոյ գրեալսդ ի Կիրակոս վարդապետի Պատմութենէն առեալ եղաք աստ» վերտառութեամբ (էջ 329): Ղունկիանոսը նկատել է մայր ձեռագրի քերականական սխալները և ընդօրինակելիս մեծ մասամբ ուղղել դրանք: Կան նաև ավելացումներ, մասնավորապես՝ Գանձակեցուց (օրինակ՝ Գ, իդ գլխի Միրայել Ա և Դավիթ Գ կաթողիկոսների մասին պատմող հատվածներում՝ 345, 1—2, 346, 1—3<sup>23</sup>): Ինչպես իրավացիորեն ենթադրում է Ն. Ակինյանը, ըստ երևույթին Ղունկիանոսը Գանձակեցու տեղեկութեան հիման վրա է վերականգնել նաև Ա.Պ հեղինակի «Մովսես Կաղանկատվացի» աշունք (Ը-ն այդ աշունքը պարունակող հնագույն ձեռագիրն է)<sup>24</sup>: Գրիչը կատարել է նաև այլ փոփոխություններ, մասնավորապես, ընդարձակել է Գ, ա և Գ, ժզ գլուխների վերնագրերը, Գ, ժդ գլխի միջին հատվածը Մանկիկի և Մերդազատի վկայութեան մասին դարձրել է առանձին գլուխ՝ Ժէ թվահամարի տակ և մի-մի պարբերություն է բաց թողել Գ, ժթ (իր՝ Ի) գլխի վերջում և Գ, իզ (իր՝ ԻԳ) գլխի Աբաս կաթողիկոսին վերաբերող հատվածում:

ՄՄ ձեռ. № 6520 (Պ): Շղագիր<sup>25</sup>: Ընդօրինակվել է Մոսկվայում, 1835 թ. Միրայել Սալանթյանցի ձեռքով, ինչպես ասվում է ՕՅա էջի հիշատակարանում «Ընդօրինակեաց Միրայել արքեպիսկոպոս Սալանթեանց ի Մոսկովյամին 1835»: Համեմատությունից պարզ երևում է, որ օրինակված է Ը-ից<sup>26</sup>: Ա.Պ բնագրին հաջորդում է Մխիթար Այրիվանեցու ժամանակագրությունը:

ՄՄ ձեռ. № 6547 (Ո): Մանր, գեղեցիկ նոտրգիր: Ավանդաբար օրինակված է համարվում Մկրտիչ էմինի կողմից, 1849 թ.<sup>27</sup>: Սակայն դա չի կարող ճիշտ լինել թեկուզ միայն այն պատճառով, որ, ինչպես պարզորոշ ցույց տվեց մեր կատարած քննությունը, 1848 թ. Լազարյան ձեմարանի հրատարակած քրեստոմատիայում Ա.Պ-ից վերցված երկու գլուխներն առնված են այս օրինակից<sup>28</sup>: Ձեռագիրն ընդօրինակված է, ըստ երևույթին, պրոֆեսիոնալ գրչի ձեռքով: Վերնագիրն ու հատորների նշումները գրված են մեծ, գեղագիր տառերով: Ո-ը ևս օրինակված է Ը-ից: Գրիչն աշխատել է տառացիորեն պատճե-

<sup>23</sup> Այսպես նշանակում ենք Ա.Պ նոր հրատարակության հատվածները: Առաջին թիվը ցույց է տալիս էջը, երկրորդը՝ տողը:

<sup>24</sup> Ն. Ակինյան, նշվ. աշխ., էջ 10:

<sup>25</sup> Նկարագրությունը տե՛ս Կաղանկատուացի, էջ 1Ը-1Թ:

<sup>26</sup> Հմմտ. Կաղանկատուացի, էջ 1Թ:

<sup>27</sup> Մևուռայ Մազիստրոս, նշվ. աշխ., էջ 1552; Հր. Անտոյան, նշվ. աշխ., էջ 41; The History, p. XIII; «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», Կ. Բ, Երևան, 1970, էջ 342, Կաղանկատուացի, էջ 1Թ (վրիպակ՝ 1847 թ.):

<sup>28</sup> «Ընտիր հատուածք, բաղեալք ի գրոց նախնի եւ արդի մատենագրաց Հայոց: Հանդերձ բառագրովք ի հայկականէ ի ռուսաց բարբառ, ի պետս աշակերտաց Լազարեանց ձեմարանի Արեւելեան լիզուաց», Մասն Ա, Մոսկվա, 1848, էջ 60—68:

նել մայր ձեռագիրը և ընդօրինակել է նրա բոլոր հիշատակարաններն ու հիշատակագրությունները: Վերջում արտագրված են նաև Գանձակեցուց քաղված վերոհիշյալ հատվածը (էջ 137բ—138ա) և Ղունկիանոսի ընդարձակ հիշատակարանը (138ա-բ): Զ-ի համեմատությամբ սրա ունեցած որոշ պակասները անուշադրության արդյունք են (ինչպես, օրինակ, 118բ էջում, ուր պակասում է Ղունկիանոսի օրինակի մի ամբողջ թերթի բնագիրը): Ո-ը եղել է Մ. էմինի հրատարակության հիմքը. դա հաստատվում է գրաբնչի մակագրության առկայությամբ (1ա): Հրատարակելուց առաջ Մ. էմինը Ո-ի բնագիրը մանրակրկիտ համեմատել է Մ. Սալլանթյանցի ընդօրինակության հետ և վերջինիս ունեցած բոլոր տարբերակները սովորական շղագրով գրանցել իր ձեռագրի մեջ: Բազմաթիվ էջերում պահպանվել են Մ. էմինի «Այս բառ պակասի առ Սալլանթեանն» կարգի գրությունները: Նա իր օրինակում ջնջել է բազմաթիվ բառեր ու արտահայտություններ, որոնք Սալլանթյանցի ձեռագրում չկային, վերջինիցս իր ձեռագրի մեջ վերարձակեցրել է Ղունկիանոսի հիշատակարանից մի հատված (137բ էջի լուսանցքում), լուսանցքներում և բառամեջերում համառոտ գրանցել այն փոքրաթիվ ժանոթությունները և Հայոց թվականի իր վերծանությունները, որ հետո արտահայտվել են հրատարակության մեջ<sup>29</sup>: Բացի այդ, հրատարակիչը վերնագիրը կրող էջի ներքևի անկյուններում ստորագրել է՝ «1849» և «Մ. էմին»: Այդ ստորագրությունը ձեռագրի գրության մասին ավանդական կարծիքին հիմք է դարձել, սակայն իրականում ցույց է տալիս Ո-ի՝ Մ. էմինի ձեռքն անցնելու ժամանակը միայն: Բուն գրչի հիշատակարան կամ այլ նշում ձեռագրում չկա: Զի հաջողվում գրության մասին որևէ տեղեկություն գտնել նաև Լազարյան ճեմարանի ձեռագրացուցակներում, որտեղ ձեռագիրը պահվել է մինչև էջմիածին տեղափոխվելը<sup>30</sup>: Ն. Ակինյանը այս ձեռագիրը թվագրում է 1841 թվականով<sup>31</sup>. այս եզրակացության նրա կրփանները մեզ հայտնի չեն, սակայն պայմանականորեն ընդունում ենք մեծավաստակ հայագետի թվագրումը:

Փարիզի Ազգային գրադարանի հայերեն ձեռագիր № 219 (P<sub>3</sub> 219): Նստերգիր<sup>32</sup>: Ըստ տիտղոսաթերթի, գրվել է 1852 թ., Մ. էմինի ձեռքով էդուարդ Գյուլոբյեի համար: Վերջում (էջ 274—275) ունի հիշատակարան, ուր ասվում է, թե ընդօրինակվել է այն օրինակից, որը Հայոց 1210 թ. (1761) գրել է Ղունկիանոս գրիչը<sup>33</sup>: Սակայն Մեսրոպ Մագիստրոսը, որը տեսել է այս ձեռագիրը, նշում է, որ այն «ընդօրինակութիւն է Մ. էմինի օրինակից (այսինքն՝ Ո-ից—Ա. Հ.), որը արտագրած էր Ղունկիանոս դպրի 1761 թ. կատարած ընդօրինա-

<sup>29</sup> Այս փաստերից երևում է, որ Վ. Առաքելյանի այն կարծիքը, թե «էմինի հրատարակությունը ոչ թե իր ձեռագրի ընդօրինակումն է, այլ՝ Սալլանթյանցի» (Կաղանկատուացի, էջ 10), պետք է համարել շարդարացված:

<sup>30</sup> Տուցակներից մեկում ճեմարանում գտնված ԱՊ ձեռագիրը թվագրվում է 1859-ով («Каталог книг и рукописей библиотек Лазаревского института восточных языков», М., 1888, с. 80): Սակայն ձեռագրի մասին հաղորդվող մյուս տվյալներից (չափսերը, թերթերի և տողերի քանակը) երևում է, որ խոսքը Ո-ի մասին է:

<sup>31</sup> Ն. Ակինյան, նշվ. աշխ., էջ 13:

<sup>32</sup> Նկարագրությունը՝ F. Macler, Catalogue des manuscrits arméniens et géorgiens de la Bibliothèque Nationale, P., 1908, p. 119:

<sup>33</sup> Նույն տեղում, The History, p. XIII:

կուսիներից<sup>34</sup>: Կարծում ենք, որ Դյուլորյեի համար գրած ձեռագրում Մ. էմինը մատնանշել է իր օրինակի (Ո) հիմքը (Զ):

Նորայր Բյուզանդացու ձեռագիրը: 1892 թ. Նորայր Բյուզանդացին ընդօրինակել է ԱՊ-ը՝ վերադասավորելով նրա գլուխներն ըստ «իրական ժամանակագրության», և հասել է մինչև Բ, լր գլուխը (մնացածի միայն զխացանկն է ընդօրինակված)<sup>35</sup>: Ձեռագիրն ունի 166 թերթ: Նորայր Բյուզանդացին, սկսելով «10 Յուլիս 1892», ծանուցում է, որ ընդօրինակությունը կատարել է Մ. էմինի հրատարակությունից (1ա): Քանի որ վերջինս հիմնված է ԱԶ ենթախմբի Մ և Ո ձեռագրերի վրա, ուստի ն. Բյուզանդացու ձեռագիրը ևս պետք է դասել այդ ենթախմբին:

Այսպիսով, ԱԶ ենթախումբը կազմում են Զ, Մ, Ո, Ք<sub>3</sub> 219 և Նորայր Բյուզանդացու ձեռագրերը: Ենթախմբի առանձնահատկությունները պայմանավորված են Զ ձեռագրի վերը ներկայացված առանձնահատկություններով:

Ա) ենթախումբ:

ՄՄ պատառիկ № 1351 (անվանում ենք Բ)<sup>36</sup>: Ունի 8 թերթ, գիրը նոտրգիր է, վերնագրերը՝ բոլորգիր: Առկա գլուխները համարակալված չեն: Պարունակում է երկու հատված ԱՊ Ա գրքից՝ ԺԱ գլխի վերջից մինչև ԺԴ գլխի սկիզբը (25,15—33,3) և ԺԶ-ի կեսից մինչև ԺԸ-ի խորագիրը (43,12—50,18): Բնագրի բնությունից պարզվեց, որ Բ-ի ձեռագիրը պատկանել է ԱՊ ձեռագրերի Ա խմբի, այն ենթախմբին, որին պատկանում են մեր ձեռքի տակ եղած Ի, Ճ<sub>1</sub>, Ճ<sub>2</sub> և Փարիզի № 217 ձեռագրերը (ԱՊ նոր հրատարակության մեջ մանրամասն ներկայացված են միայն Ճ<sub>1</sub>-ի ընթերցումները): Յոթ տասնյակի հասնող զեպրեում պատառիկի ընթերցումները նման են նշված ձեռագրերի ընթերցումներին: Ընդ որում մի շարք զեպրեում դրանք նման են կա՛մ Ի-ի, կա՛մ Ճ<sub>1</sub>, Ճ<sub>2</sub>, Փարիզի № 217 (վերջիններն ունեն ընդհանուր մայր՝ Մ<sub>1</sub>) ձեռագրերի իրարից տարբերվող ընթերցումներին: Դա թույլ է տալիս պնդել, որ Բ-ի ձեռագիրը եղել է Ի և Մ<sub>1</sub> օրինակների մայրը (կամ, ծայրահեղ դեպքում, օրինակված է այդ մորից. քանի զեռ ձեռագիրն ամբողջությամբ մեր ձեռքին չէ, նման հնարավորությունը չի կարելի բացառել):

Բ-ի ձեռագրից ծագող բազմաթիվ ընդօրինակությունները խմբավորում ենք որպես Ա խմբի Աք ենթախումբ:

ՄՄ ձեռագիր № 4197 (Ի): Նոտրգիր<sup>37</sup>: Վերնագիրն է. «Գիրք պատմութեան Աղուանից: Բաժանեալ յերիս հատոս: Արարեալ ի Մովսիսէ Կաղկանտուացույ» (էջ 3ա): Ապա նույն էջում ունի. «Արտագրեալ ճիշտ բաղդատութեամբ ընդ գաղափարին, որ ի Մատենադարանի Արոսոյ Սերոյն էջմիածնի: Ի պետս սարկաւազ Սահակայ Գեղամեանց. ի 1822 թուականի»: Գրիչը որոշ վրիպումներ

34 ՄԼուրայ Մագիստրոս, նշվ. աշխ., էջ 1552:

35 ՄՄ, Արխիվ, Նորայր Բյուզանդացու թողոն, թղթ. 235/3, վավ. № 263:

36 Այս պատառիկի մասին տեղեկացել ենք Մաշտոցի անվ. Մատենադարանի զիտաշխատակից Ա. Մարգարյանից, որին հայտնում ենք մեր երախտագիտությունը: Շնորհակալությամբ սխիտի նշենք նաև, որ ներկա աշխատանքը բազմաթիվ ուրիշ բացեր կունենար, եթե չլիներ Մատենադարանի ավանդապահ Յ. Վարդանյանի մշտական օգնությունը:

37 Նկարագրությունը՝ Կաղանկատուացի, էջ ԼԸ:



ունի, օրինակ, պակասում են Դավթակի ողբի Պ տառի քառյակի առաջին տողը և երկրորդի կեսը (229, 16—17):

Վիեննայի Մխիթարյան մատենադարանի ձեռագիր № 8 (անվանում ենք W<sub>1</sub>): Գիր՝ շղագիր, խորագրերը՝ բուրգիր, ժամանակ՝ 1838 թ., «Գրիչ՝ անհայտ, ուսասնայ մը անշուշտ: Տեղի՝ հաւանականորեն էջմիածին», այլ տեղեկութուններ չունի<sup>38</sup>: Վերնագիրն է. «Պատմութիւն Աղուանից, բաժանեալ յերիս հատորս. Արաբեալ ի Մովսիսէ Կաղկանտուացոյ, որ առնէ զսկիզբն յառաջնաստեղծ մարդոյ անտի յԱդամայ և այնպէս շարունակելով զվերաբերեալսն ազգին Աղուանից և մասնաւորապէս այլոց ազգաց, և հասուցանէ ցաւարտ իններորդ դարուն: Օրինակեալ բաղդատութեամբ ընդ գաղափարին՝ որ ի գրանոցի Արոտոյ էջմիածնի, յամի Տեառն 1838»<sup>39</sup>: Վերնագրի մեջ մեր ընդգծած հատվածները կրկնում են նախորդ՝ ի ձեռագրի վերնագրերը, ուստի կարելի է ենթադրել, որ սրանք բխում են մայր օրինակից, այսինքն Բ-ից: Ինչ վերաբերում է միջին հատվածին, ապա հակված ենք մտածելու, որ այն գալիս է Հովհաննես Շահխաթունյանցից, որն, ինչպես ստորև կտեսնենք, այս ձեռագրի ընդօրինակման կազմակերպիչն է, և որի 1829 թ. ընդօրինակության վերնագրում ԱՊ-ը բնութագրված է գրեթե նույն ձևով:

Հ. Տաշյանը W<sub>1</sub>-ի մասին հայտնում է նաև հետևյալը. «Թեև սկզբան տուած տեղեկութիւնը կըսէ, թէ օրինակած ըլլայ «բաղդատութեամբ էջմիածնի մեկ ձեռագրին», բաղդատութեան արդիւնքը կամ ընթերցուածոց տարբերութիւնք շենք գտներ նշանակուած ձեռագրիս վրայ: Միայն տեղ տեղ գրչին մոռցած բառերն ու խօսքերը աւելցուած են կամ սխալմունքն ուղղուած: Ամբողջ կը ցուցնէ, որ հրատարակութեան համար գրուած ըլլալու է և հայագէտ մը (Պրոսէ՞) եղերաց վրայ շատ յաջախ գաղղիներէն ծանօթութիւններ գրեր է՝ մեկնութիւններ դժուար բառերու և այլ տեղեկութիւններ»<sup>40</sup>: Այս քաղվածքի սկզբում Հ. Տաշյանի արտահայտած կասկածը փարատվում է վերը ներկայացված մեր այն ենթադրությամբ, ըստ որի «բաղդատութեամբ ընդ գաղափարին, որ ի գրանոցի Աթոռոյ էջմիածնի» արտահայտությունը գալիս է մայր ձեռագրից: Բրոսսին վերաբերող՝ Հ. Տաշյանի ենթադրության հետ դժվարանում ենք համաձայնել. Մ. Բրոսսեն, իր իսկ հաղորդման համաձայն, օգտվել է ԱՊ մի ուրիշ՝ 1841 թ. Պետերբուրգում գրված օրինակից (Ա)<sup>41</sup>: W<sub>1</sub>-ի ֆրանսերեն լուսանցարությունների հեղինակը, ամենայն հավանականությամբ, էժեն Բորեն է: Վերջինս 1838—1839 թթ. ճանապարհորդել է Հայաստանում՝ մասնավորապես Կաղանկատվացու անհայտ երկր գտնելու նպատակով<sup>42</sup>: էջմիածնում վանքի մատենադարանապետ Հովհաննես Շահխաթունյանցը նրան ցույց է տվել ԱՊ մի հին ձեռագիր և խոստացել ընդօրինակություն կատարել նրա համար: էջմիածնից հեռանալուց ութ ամիս անց, արդեն Թավրիզում,

<sup>38</sup> Հ. Յ. Վ. Տաշեան, Յուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 51:

<sup>39</sup> Նույն տեղում:

<sup>40</sup> Նույն տեղում, էջ 52:

<sup>41</sup> M. Brosset, Additions et éclaircissement à l'Histoire de la Géorgie. Depuis l'antiquité jusqu'en 1469 d J. C., SPb, 1851, p. 468.

<sup>42</sup> E. Boré, Histoire des Aghovans et de leur conversion au christianisme, «Univers catholique», XXII vol., 2-e série, t. II, 1846, p. 139.

է. Բորեն ստացել է խոստացած ընդօրինակությունը<sup>43</sup>: Այն գրված էր շղագրով և առատ էր համառոտագրություններով: Հատուկ անունների մեջ հանդիպող սխալները Բորեն վերագրում է մայր օրինակին և հիմնավորում այդ նրանով, որ ձեռագրի օրինակումից հետո Շահխաթունյանցը այն համեմատել է «արխետիպի» հետ և ուղղել սխալները<sup>44</sup>: Վերջին փաստը հիշեցնում է Հ. Տաշյանի վերը բերված նկարագրության մեջ մեր ընդգծած հատվածը այն մասին, որ Ս<sub>1</sub>-ում գրչի բաց թողած բառերն ավելացված են և սխալներն ուղղված: Նրշված հանգամանքները ցույց են տալիս, որ Ս<sub>1</sub>-ը գրականության մեջ հայտնի Բորեի օրինակն է, որից ընդօրինակված են d<sub>1</sub> և d<sub>2</sub> ձեռագրերը:

ՄՄ ձեռագիր № 3043 (d<sub>1</sub>): Գեղեցիկ նոտրգիր<sup>45</sup>: Ընդօրինակված է Թավրիզում 1839 թ. է. Բորեի օրինակից: Վերնագիրը նույնն է, ինչ Ս<sub>1</sub>-ինը: Միայն թվագրումն է տարբեր. «Փրինակեալ բաղդատութեամբ ընդ գաղափարին, որ ի գրանոցի Աթոռոյն էջմիածնի, յամի Տեառն 1839, ի մայիսի 1-ին» (Յա): Այնուհետև գրիչն ավելացրել է. «Իսկ այժմ վերստին ընդ օրինակեալ ի միաբանէ սրբոյ էջմիածնի, Նրեանցի Պարոն Անդրէասեան Մկրտիչ աւագ սարկաւագապետէ, հրամանաւ դաստիարակին իմոյ՝ Տէր Մարտիրոսեան հանճարիմաստ Ղազար վարդապետի, ի վարժարանն Գավրիժու, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյն, ի վայելս անձին իմոյ»: Ձեռագրի վերջին երեք էջերում տեղավորված «Վախճանական ազդարարութիւն ընդ օրինակողիս» վերտառութեամբ հիշատակարանում գրիչը հայտնում է նաև հետևյալը. «որպէս և հոգևոր հօրն մերոյ՝ գերապատիւ տեառն Ղազարու վարժապետ վարդապետի... գնացեալ առ գաղիղեացի ոմն, որոյ անուն միախ Պօռէ կոչեցեալ, և խնդրեալ ի նմանէ թախանձանօք զերկուս հռչակելի պատմագրութիւնս՝ դՅովհաննէսի, Հայոց գերիմաստ կաթողիկոսի և գԱղուանից պատմութիւն Մովսիսի Կաղկանտուացոյ, զորս բերեալ և վաղ ուրեմն ջերմեռանդն սիրով խնդրէաք ձեռնասուն աշակերտես նորին ի ձեռս բերել, զորս ի բերեալն ընդ իւր ետ մեզ՝ աշակերտացն իւրոց ի յընդ օրինակել զնոսա..., որոյ և իմ սիրով հորդորեալ ի հազար ուրն հարիւր երեսուն և ինն ամի, ի մինն սեպտեմբերի սկսեալ օրինակեցի ես՝ աւագ սարկաւագ Սրբոյ էջմիածնայ, տիրացու Մկրտիչ Պարոն Անդրէասեան Նրեանցոյ՝ ի վայելս անձին իմոյ և իմայնոցն, և աւարտեալ ի նոյն ամի նոյեմբերի տասին և յանձնեալ զամենեսին մարդասիրութեան բարեմիտ ընթերցողացդ...» (էջ 369—370): Անհասկանալի է մնում միայն մի փաստ՝ ինչու է գրիչն իր գաղափար օրինակը (Ս<sub>1</sub>) թվագրում 1839 թ. մայիսի 1-ով: Գուցե պետք է ենթադրել, թե էջմիածնից հեռանալուց 8 ամիս անց, խոստացած ձեռագիրը Թավրիզում ստանալով, է. Բորեն նրա վրա մատիտով նշել է ստացման ամսաթիվը, որը հետագայում ջնջվել է և այդ պատճառով չի արձանագրվել Հ. Տաշյանի նկարագրության մեջ:

ՄՄ ձեռագիր № 6466 (d<sub>2</sub>): Շղագիր<sup>46</sup>: Առաջին երեք էջերի վրա բաժան-

43 նույն տեղում:

44 նույն տեղում:

45 նկարագրությունը՝ Կաղանկատուացի, էջ 46: Վ. Առաքելյանը այս ձեռագիրը սխալմամբ նկարագրել է նաև երկրորդ անգամ՝ իբրև Թավրիզի երրորդ ձեռագիր (էջ 10Ա). այդպիսին իրականում գոյություն չունի:

46 Համառոտ նկարագրությունը՝ Մեսրոպ Մազիստրոս, նշվ. աշխ., էջ 1552:

բաժան գրված է  $W_1$ -ի և  $d_1$ -ի վերնագիրը, միայն թվագրումն է տարրեր. «Օրինակեալ բաղդատութեամբ ընդ գաղափարին, որ ի գրանոցի Աթոռոյ էջմիածնի, յամի Տեառն 1839, ի մայիս 9»: Ապա գրիչը շարունակում է. «Իսկ այժմ վերստին երրորդ անգամ օրինակեալ ի դարիժեցոյ Տէր Յովհաննէսեան Յովսէփայ դպրէս, հրամանաւ դաստիարակին իմոյ՝ Տէր Մարտիրոսեան հանճարիմաստ Ղազարու վարժապետ վարդապետի: Ի վարժարանն Գարիժու, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնոյ եկեղեցոյն»: Այսպիսով,  $d_2$ -ն ընդօրինակված է նույն տեղում, ինչ որ  $d_1$ -ը, նույն Ղազար վարդապետի հրամանով և նույն թվականին: Համեմատությունն էլ, ինչպես և պետք էր սպասել, ցույց է տալիս, որ ձեռագիրն ընդօրինակված է Բորեի ( $W_1$ ) օրինակից (այն տեղերում, ուր  $d_1$ -ի ընթերցումները տարրերվում են մեր ձեռքի տակ գտնվող  $p$  և  $i$  ձեռագրերի ընթերցումներից,  $d_2$ -ը համապատասխանում է  $p$ -ին և  $i$ -ին): Անհասկանալի է մայր օրինակի թվագրումը 1839 թ. մայիսի 9-ով, փոխանակ գոնե  $d_1$ -ի պես՝ մայիսի 1-ի: Այս անհամապատասխանությունը կա՛մ պատահական սխալի արդյունք է, կա՛մ մնում է ենթադրել, թե է. Բորեն իր օրինակի վրա նշանակել էր մեկից ավելի ամսաթիվ (ասենք՝ ընթերցման սկզբի և ավարտի):

Փարիզի Ազգային գրադարանի հայերեն ձեռագիր № 217 ( $P_1$  217): Մաշտոցի անվ. Մատենադարանում պահվում է այս ձեռագրի մանրածապավենը (№ 880): Շղագիր<sup>47</sup>: Պահպանակի վրա գրված վերնագիրը կրկնում է  $W_1$ ,  $d_1$ ,  $d_2$  ձեռագրերի վերնագրերը: Միայն վերջին նախադասութունն է փոփոխված. «Մերս ընդօրինակութիւն եղև ցարտադրութեանն բաղդատելոյ ընդ գաղափարին՝ եղելոյ ի գրատան էջմիածնի. ի 1839 ամի»: Ներքևում գրչի նշումն է. «Գրութեամբ Արէլ վարդապետի Մխիթարեանց: 1850. ի սուրբ էջմիածին»: Համեմատությունը պարզորոշ ցույց է տալիս, որ այս ձեռագիրն ընդօրինակված է  $d_1$ -ից, բանի որ կրկնում է նրա՝ Ար ենթախմբի մյուս ձեռագրերի ընթերցումներից ունեցած շեղումները:  $P_1$  217-ը, ամենայն հավանականութեամբ, Կ. Շահնազարյանի հրատարակութեանը հիմք ծառայած ձեռագրերից երրորդն է<sup>48</sup>:

Արմաշի վանքի ձեռագիր № 61: Գիր՝ շղագիր, ժամանակ՝ 1838, տեղ՝ էջմիածին, գրիչ, ստացող, հիշատակագրություններ կամ այլ տեղեկություններ չունի<sup>49</sup>: Վերնագիրը բառացի կրկնում է  $W_1$ ,  $d_1$ ,  $d_2$ ,  $P_1$  217 ձեռագրերի վերնագրերը, իսկ թվագրությունը՝  $W_1$ -ինը. «օրինակեալ բաղդատութեամբ ընդ գաղափարին, որ ի գրանոցի Աթոռոյ էջմիածնի, յամի Տեառն 1838»: Ուրեմն ընդօրինակված է  $W_1$ -ից: Սակայն անսպասելիորեն Լ. Թոփճյանի նկարագրութեան մեջ հանդիպում ենք հետևյալ տեղեկութեանը. «Առանձին մտադրութեան արժանի է ձեռագրիս 35-րդ գլուխը (երկրորդ գրքի—Ա. Լ.), որուն վերնագիրն է Ողբք ի մահն Ջեանշէրի մեծի իշխանին (Չ. էջ 222 = տպ. էջ 354), որովհետեւ Զ-ի մէջ այս գլուխը կը վերջանայ բառերովս «որ գամենայն զիրչաց փարատէր զյուզմունս» (Չ. էջ 225) և տպագրի համեմատութեամբ (տպ. էջ 357)

<sup>47</sup> Նկարագրությունը՝ F. Macler, նշվ. աշխ., էջ 118; Մեսրոպ Մազխարոս, նշվ. աշխ., էջ 1553:

<sup>48</sup> Նահն. էջ 85: Հմմտ. Մեսրոպ Մազխարոս, նշվ. աշխ., էջ 1553:

<sup>49</sup> Յ. Թօփճեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Արմաշի վանքին, Վենեթիկ, 1962, էջ 202: Այս ցուցակը կազմվել է 1903—1904 թթ.:

ուղիղ երկու երես կամ էջ թերի կը մնայ վերջէն կամ կը կրճատուի»<sup>50</sup>:  $W_1$ -ը Դավթակի ողբի շարունակութիւնն ունի (նրանից ընդօրինակված  $d_1$  և  $d_2$  ձեռագրերում այն կա), ուստի և Արմաշի ձեռագիրն էլ պիտի ունենար այն: Ստիպված ենք ենթադրել, թե վերջինս սկսել են ընդօրինակել  $W_1$ -ից և շարունակել մի ուրիշ ձեռագրից: Արմաշի վանքի գրչագրերը Մեծ եղեռնի ժամանակ կողոպտվել են<sup>51</sup>:

Վիեննայի Մխիթարյան մատենադարանի ձեռագիր № 36 ( $W_2$ ): Ընդօրինակութիւն է նույն մատենադարանի № 8 ձեռագրից: Բնականաբար վերնագիրը նույնն է, ինչ  $W_1$ -ինը և Արմաշի օրինակինը: Հիշատակարան շունի: Ըստ Հ. Տաշյանի, ընդօրինակվել է 1845—1867 թթ.<sup>52</sup>:

Այսպիսով, ԱՅ ենթախումբը կազմում են Ծ պատառիկը և նրա ձեռագրին հանգող  $\bar{1}$ ,  $W_1$ ,  $W_2$ ,  $d_1$ ,  $d_2$ ,  $P_1$  217 և Արմաշի № 61 ձեռագրերը: Անկասկած Ծ-ից է ծագել նաև Կ. Շահնազարյանի՝ էջմիածնում ընդօրինակած ձեռագիրը, քանի որ այն ունեցել է Դավթակի ողբը լրիվ (Շահն., հ. Ա, էջ 85): Ենթախմբի հիմնական առանձնահատկութիւնն այն է, որ Դավթակի ողբն այստեղ ամբողջական է: Ինչպիսի՞ն է Ողբի երկրորդ կեսի ծագումը. Ծ-ի գրիչն օգտվել է ինչ-որ հնագույն աղբյուրի՞ց, թե՞ ինքն է հնարել մայր օրինակում պակասող շարունակութիւնը<sup>53</sup>: Խնդիրը կարող է հատուկ լեզվական քննութիւն: ԱՅ ենթախմբի մյուս առանձնահատկութիւնն այն է, որ այն ունի Բ խմբի ձեռագրերին բնորոշ երեք տասնյակի հասնող տարբերումներ, այդ թվում՝ երկու ընդարձակ հատված: Բ, իր գլխում, Զվանշիր իշխանի ստացած թուփակի նկարագրութիւն մեջ, առկա է Ա խմբի մյուս ձեռագրերի մեջ պակասող «Այսպէս և բիրք աշացն, որ և սոնքաձև կտցոյն փողորտաձգութիւն ի վայր կոյս» հատվածը (199, 14—15) և Գ, ի գլխում<sup>54</sup>, ուր հնագույն ձեռագրից մի թերթ ընկած լինելու հետևանքով Ա խմբի մյուս ձեռագրերում առկա է «Որոյ նշխարքն լուսաճաճանշ կոտորեաց զնոսա» անիմաստ արտահայտութիւնը (էմին, էջ 265), ԱՅ ենթախումբը դեն է նետում «կոտորեաց զնոսա»-ն և շարունակում ու ավարտին է հասցնում պարբերութիւնը. «լուսաճաճանշ փայլմամբ ահացուցանէր զթշնամիսն, զոր տեսեալ նոցա՝ անհետեցին ի գիշերի, և ոչ ոք գիտաց զնա ի քրիստոնէիցն, պսակողին իւրում մնայ միայն յայտնութեանն» (Շահն., հ. Բ, էջ 58): Հնարավոր չէ ճշգրիտ որոշել, թե Բ խմբի ո՞ր ձեռագիրն է օգտագործել Ծ-ի գրիչը: Կարելի է միայն ենթադրել, որ, ինչպես և ԱՆ ենթախմբի համար, դա Ե ձեռագիրն է: Վերջինս էջմիածին է բերվել 1766 թ.<sup>55</sup>: Եթե մեր

50 նույն տեղում:

51 նույն տեղում, էջ 5:

52 Հ. Յ. Վ. Տաշեան, նշվ. աշխ., էջ 193:

53 Այս հարցն առաջադրել և խնդրին խոստացել է անգրագետնալ դեռևս Խ. Դադյանը («Իսկյան, 1895, էջ 337»), սակայն իր խոստումը չի իրագործել:

54 Նոր բնագրում՝ Գ, իսկ Վ. Առաքելյանը, հետևելով ԱԶ ենթախմբի ձեռագրերին, Մանկիկի և Մերդագատի պատմութիւնը ներկայացրել է առանձին՝ Գ, ժէ գլխով, որի հետևանքով ԱՊ վերջին գլուխների համարները մեկով աճել են: Պետք է հետևել Կ. Շահնազարյանի հրատարակութիւն, 2. Գովսեթի՝ անգլերեն և Վ. Առաքելյանի՝ աշխարհաբար թարգմանութիւնների գլխակարգութիւնը:

55 «Գիւան Հայոց պատմութեան», Գիրք Գ, «Սիմէոն կաթողիկոսի Յիշատակարանը»: Կենսագրութեամբ և յանելութեամբ ու ծանօթութիւններով հրատարակեց Գիւտ քահանայ Աղանեանց, Քիֆլիս, 1894, էջ 376:

ենթադրությունն արդարացի է, ապա Բ-ի ձեռագրի ընդօրինակման ժամանակը կարելի է սահմանափակել 1766—1822 թթ. միջև:

Այ ենթախումք:

ՄՄ ձեռագիր № 2866 (1): Նտարանման շղագիր<sup>56</sup>: Սկզբում ունի ուսերեն վերնագիր. «История происхождения Агванов, жителей Русских мусульманских провинций, Моисея Кагкантиваца, списанная с древней рукописи, хранящейся в Эчмиадзинской библиотеке, Армянским Архимандритом Иоаннесом Шахатуновым» (1ա): Հաջորդում է հայերեն ընդարձակ վերնագիր-ծանոթագրությունը. «Պատմութիւն Աղուանից: Արարեալ Մովսէսի Կաղանկատուացոյ ի նոյն ազգէ և յաշխարհէ. սկիզբն առնէ ի ծննդոցն Յարեթի և հասուցանէ ցվախճան իններորդ դարուն, շարակարգելով զպատմութիւն հայրենի աշխարհին, իշխանութեանն, բրիստոնէական լուսաւորութեանն և յաջորդութեան հոգեոր իշխանութեան և զայլ պարակայս, վերաբերեալս ազգի և աշխարհի իւրոյ» (2ա): Նույն էջի ներքեում գրչի հիշատակարանն է. «Այս մատեան, բովանդակեալ չերիս հատորս, գտանէր ի Գրանոցի մեծի Աթոռոյս կաթողիկէ էջմիածնի, հնագոյն գրչութեամբ եղելոյ ի մենաստանին Յովհաննավանաց՝ որ մերձ ի Կարբի, ի վերայ Քասաղ գետոյ, յարևմտից նորա, ի ժամանակի անդ առաջնորդութեան այնր վանաց Համազասպ, որ ունէր յիշատակարան ի սկիզբն պատմութեան յայս օրինակ: «Այս պատմութիւն իմաստասիրական ոչ գոլով ի սուրբ մենաստանս Յովհաննու...»: Արդ նոյն առաջի գաղափարի պատմութեանս գոլով կարի մեծագիր և դժուարընթերց, օրինակեցի ես ինքնին և յաւելի ևս ի վախճանին զցանկ մտացն բովանդակ ըստ այբուբենական կարգի: Յամի Տեառն 1829. ի սուրբ էջմիածին—Յովհաննէս արեղայ Գէորգեան Շահխաթունեանց Շահրիարցի» (2ա): Բնագրից հետո Շահխաթունյանցը տեղադրել է երեք ցանկ՝ «Անուանք կաթողիկոսաց աղուանից՝ որ ի վերջին սոյն այս բովանդակեն. և թիւք ամաց և ամսոց իշխանութեան նոցին» (էջ 89ա-բ), «Յանկ իւրաբանչիւր գլխոց երից հատորոց պատմութեանս աղուանից» (90ա—92բ) և «Յանկ մտաց պատմութեանս աղուանից այբուբենական կարգաւ շարայարիլ» (93ա—101բ):

Շահխաթունյանցը տառացիորեն հետևում է մայր օրինակին (ա), միայն ուղղելով նրա բերականական սխալները: Նա համեմատել է իր ընդօրինակությունը Բ խմբի մի ձեռագրի հետ, որի որոշ ընթերցումներ նշել է լուսանցքում, բնագրում ընդգծելով համապատասխան բառը կամ տեղը: Դրանց թվում են նաև վերը նշված այն երկու համեմատաբար ընդարձակ հատվածները, որոնք բնագրում ուղղակի ավելացրել էր Բ-ի գրիչը: Համեմատությունը ցույց է տալիս, որ Բ խմբի օգտագործված ձեռագիրը Ե-ն է<sup>57</sup>: Այսպես, «ոսկեստրեայն»-ի դիմաց, լուսանցքում (էջ 45ա) գրված է «ոսկեստրեան» (175,9), «իւրոց»-ի դիմաց (53բ)՝ «իւրոյ» (207,13), «տարաւարողք»-ի դիմաց (71ա)՝ «տաղաւարողք» (276,11), 87ա էջի լուսանցքում ավելացված է Ա խմբի ձեռագրերում

<sup>56</sup> Նկարագրությունը՝ Դաղյան, 1895, էջ 336:

<sup>57</sup> Հմմտ. The History, p. XIII:



պակասող «ընթանալ» բառը (338,3): Բերված դեպքերում այդպիսի ընթերցումներ ունի միայն Ե ձևագիրը:

ՍՍՀՄ ԳԱ Արևելագիտության ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքի հայերեն ձևագիր № В—56 (նշանակում ենք Ա): Մաշտոցի անվ. Մատենադարանում պահպանվում է այս ձևագրի մանրածապավենը (№ 275): Ձևագիրն ինստիտուտի գրադարան է փոխանցվել Ռուսաստանյան Կայսերական ԳԱ Ասիական թանգարանից<sup>58</sup>, որի մասին ֆրանսերեն նշում կա պահպանակ թերթի վրա: 1ա էջում կրկնված է Ե-ի ընդարձակ ուսերեն վերնագիրը, որին հաջորդում է գրչության մասին ֆրանսերեն հիշատակագրությունը «Cette histoire des Aghovans a été copié sur le manuscrit d'Edchmiadzian... par Ioan Nazarof. 1841»: Բառացի կրկնվում է նաև Ե-ի վերնագիրը՝ ներառյալ Շահխաթունյանցի ստորագրությունը (2ա—3ա): Ձևագրի ընդօրինակման մասին Ք. Պատկանյանը հայտնում է հետևյալը. «Շ. Շահխաթունին իր իսկ ձեռքով իր համար առանձին օրինակ է արտագրել, որը Գիտությունների Ակադեմիայի խնդրանքով 1841 թ. ուղարկվել է Պետերբուրգ: Ակադեմիան կարգադրել է իր համար ընդօրինակություն կատարել, որից և արված է ներկա թարգմանությունը»<sup>59</sup>: Ա-ն իրոք Ե-ի տառացի պատճենն է: Գրիչ Հովհաննես Նազարովը<sup>60</sup> լուսանցքներում ընդօրինակել է նաև Ե ձևագրից Շ. Շահխաթունյանցի քաղած լրացումները: Միայն մի տեղ՝ Գ, ի գլխի ընդարձակ հատվածը մտցված է բնագիր:

Փարիզի Ազգային գրադարանի հայերեն ձևագիր № 218 (P<sub>2</sub> 218): Շղայիք է, ունի ֆրանսերեն հետևյալ հիշատակագրությունը. «Ընդօրինակված է իմ՝ էդ. Գյուլոբյեի կողմից Ս. Պետերբուրգի Գիտությունների Կայսերական Ակադեմիային պատկանող բառածալ ձևագրից, 1852 թ. սեպտեմբեր-նոյեմբերին. նույն տարվա դեկտեմբերի 11—19-ին համեմատված է վերը հիշված ձևագրի հետ և՛ մի ձևագրի, որը պատկանում էր սկյուտարցի պարոն Չամուրջի Օղլուն, և (վերջինի տարընթերցումները—Ա. Շ.) իմ ընդօրինակության վրա նշված են В տառով»<sup>61</sup>: 224 էջից սկսվում է գլխացանկը, իսկ 252 էջից՝ հատուկ անունների ցանկը<sup>62</sup>: Ինչպես տեսնում ենք էդ. Գյուլոբյեի տեղեկությունից՝ P<sub>2</sub> 218-ն ընդօրինակված է Ա-ից: Ինչ վերաբերում է Չամուրջի Օղլու (կոստանդնուպոլսեցի հայանի գործիչ Հովհաննէս Չամուրճյան Տերոյինց) ձևագրին, որը P<sub>2</sub>-ը տեսած Չ. Գովսեթի տեղեկության համաձայն՝ թվագրված է եղել 1838 թվականով<sup>63</sup>, ապա մեր կարծիքով դա կարող է լինել հետագայում Արմաշի վանքին պատկանած օրինակը, որն, ուրեմն, ժամանակին գտնվել է Փարիզում, ուստի կարելի է նաև ենթադրել, թե 1860 թ. այն օգտագործվել է Կ. Շահնագարյանի կողմից (Շահն. 4):

<sup>58</sup> Ն. Ալինյանը այս ձևագիրը սխալմամբ հիշատակում է երկու անգամ, մեկ՝ որպես Պետերբուրգի Ակադեմիայի, մեկ՝ Ասիական թանգարանի ձևագիր (Ն. Ալինյան, նշվ. աշխ., էջ 13):

<sup>59</sup> История агван Мусея Каганкатвацци, писателя X века. Перевод с армянского, СПб., 1861, с. IV: Հմմտ. М. Brosset, նշվ. աշխ., էջ 468:

<sup>60</sup> Նրա մասին տե՛ս Р. Р. Орбелу, Собрание армянских рукописей Института востоковедения АН СССР, УЗИБ, т. VI, М.—Л., 1953, с. 110.

<sup>61</sup> F. Macler, նշվ. աշխ., էջ 119: Նկարագրությունը տե՛ս նաև Մեսրոպ Մազիսարու, նշվ. աշխ., էջ 1553:

<sup>62</sup> Մեսրոպ Մազիսարու, նշվ. աշխ., էջ 1553:

<sup>63</sup> The History, p. XIII.

Փարիզի Ազգային գրադարանի հայերեն ձեռագիր № 221 (P<sub>5</sub> 221): Գեղեցիկ շղագիր է, ընդօրինակված 1859 թ. ապրիլին Մ. Բանելլի կողմից, մի օրինակից, որը հանդում էր էջմիածնի գրադարանի 13-րդ դարի ձեռագրին. վերջում ունի գլխացանկ և անվանացանկեր<sup>64</sup>: Առաջին և երկրորդ էջերում բացի ընդօրինակված են 1-ի ընդարձակ վերնագիրը և 2. Շահխաթունյանցի հիշատակագրությունը<sup>65</sup>, որոնք, ինչպես ասացինք, առկա են նաև և ձեռագրում: Թե՛ վերնագիրը, թե՛ բնագրի վերջում ցանկեր ունենալը, ցույց են տալիս, որ P<sub>5</sub> 221-ը պատկանում է Ա՛ ինթախմբին: Գրիչ Մ. Բանելլի անունով Ազգային գրադարանում պահպանվում են ևս երկու հայերեն ձեռագիր, օրինակված Փարիզում էդ. Գյուլորյանի համար: Անկասկած Փարիզում պիտի ընդօրինակված լինի նաև P<sub>5</sub>-ը: Այն չի կարող ընդօրինակված լինել 1859—1860 թթ. Փարիզում գտնված Արմաշի (2. Չամուրճյանի) ձեռագրից, քանի որ վերջինս կրում է W<sub>1</sub>-ի (է. Բորևի օրինակի) վերնագիրը: Այն չի կարող ընդօրինակված լինել նաև նույն ժամանակ Փարիզում գտնված Մ. Մոմճյանի օրինակից (Շահն. 2), քանի որ վերջինս ամենայն հավանականությամբ, չունի գլխացանկ և անվանացանկեր (սրանից ընդօրինակված Արմաշի ձեռագրի նկարագրության մեջ ցանկերի մասին ոչինչ չի ասվում): Հավանաբար 1859 թ. Փարիզից պիտի արդեն Պետերբուրգ վերագարձված լինեն նաև և ձեռագիրը, ուստի մնում է ենթադրել, որ P<sub>5</sub>-ի օրինակումը կատարված է էդ. Գյուլորյանի պատկանած ձեռագրից, այսինքն՝ P<sub>2</sub> 218-ից:

Այսպիսով, Ա՛ ինթախումբը կազմում են յ, ւ, P<sub>2</sub> 218 և P<sub>5</sub> 221 ձեռագրերը: Անկասկած 1-ից է ծագել նաև Կ. Շահնազարյանի օգտագործած երկրորդ ձեռագիրը (Շահն. 2), որի մասին հրատարակիչը հայտնում է, թե ընդօրինակված էր էջմիածնում և նվիրվել էր իրեն մեծանուն գիտնական Մկրտիչ աղա Մոմճյանի կողմից (Շահն., հ. Ա, էջ 85): Ներկայումս անհայտ այդ ձեռագիրը չէր կարող պատկանել Աջ ենթախմբին, որովհետև Փարիզի հրատարակությունն ամենևին չի արտացոլում ց ձեռագրի բնորոշ առանձնատեսությունները: Այն չէր կարող ծագել նաև Ծ ձեռագրից, քանի որ Դավթակի ողբը կիսատ ունի: Ի դեպ, Մկրտիչ Մոմճյանը կոստանդնուպոլսեցի էր<sup>66</sup>, ուրեմն 1-ից ծագող և Դավթակի ողբը կիսատ ունեցող Շահն. 2-ը ժամանակին գտնվել է Պոլսում: Այդ դեպքում, ամենայն հավանականությամբ, հենց նրանից են շարունակել ընդօրինակել Հովհաննես Չամուրճյանին պատկանած, 1852 թ. Փարիզ տարված, 1860 թ. Գալուստ Տեր-Պողոսյանի կողմից Կ. Շահնազարյանին տրամադրված և 1880-ական թթ. Պոլսի մոտ գտնվող Արմաշի վանքին անցած ձեռագիրը, որի սկիզբն ընդօրինակված էր է. Բորևի օրինակից (W<sub>1</sub>): Այս առիթով

<sup>64</sup> Նկարագրությունը տե՛ս F. Macler, նշվ. աշխ., էջ 119—120; Մեսրոպ Մազխարոս, նշվ. աշխ., էջ 1552:

<sup>65</sup> Մաշտոցի անվ. Մատենադարանի ավանդապահ Յ. Վարդանյանի սիրալիր միջնորդությամբ սույն ձեռագրի մասին մեզ յրացուցիչ տեղեկություններ է ուղարկել Փարիզի Ազգային գրադարանի հայկական բաժնի վարիչ պ. Հարություն Գևորգյանը, որին հղում ենք մեր խորին շնորհակալությունը:

<sup>66</sup> Կ. Կոստանեանց, Կարապետ վարդապետ Շահնազարեանց: Կենսագրական ակնարկ, Թիֆլիս, 1911, էջ 28:



կարելի է նշել նաև, որ է. Բորեն Կոստանդնուպոլսում է գտնվել 1846 թ.<sup>67</sup>, ուստի Արմաշի վանքի ձեռագրի ընդօրինակումը ենթադրաբար կարելի է դնել 1846 և 1852 թվականների միջև:

Բ խմբի ձեռագրեր:

bil ենթախումբ:

ՄՄ ձեռագիր № 1725 (b): Նոտրգիր<sup>68</sup>: Գրիչը թողել է մի համառոտ հիշատակագրություն. «զՅօհաննէս պիտակ՝ սպասաւոր Յիսուսի, յիշեալ աղաչեմ» (160ա): ԱՊ վերջին գլուխը՝ Աղվանից կաթողիկոսացանկը, գրիչը շարունակել է և հասցրել մինչև Պետրոս Խանձկեցի կաթողիկոսը՝ վախճանված հայոց ՌՃԻԳ (1675) թվին: Մեսրոպ Տեր-Մովսիսյանը հենց այս թվականն էլ համարում է ձեռագրի գրչության տարին<sup>69</sup>: Կաթողիկոսացանկի վերջում հետագա մի ձեռք ավելացրել է հաջորդ կաթողիկոսների անունները մինչև Տեր Իսրայել Խոտրաշինացին՝ ՌՄԺԲ (1763) թ.: Ձեռագրի վրա պահպանվել են նաև Հայոց կաթողիկոս Սիմեոն Երեանցու նշումները<sup>70</sup>: Ինչպես վերը նշեցինք, Ե-ն էջմիածին է տեղափոխվել 1766 թ.:

ԱՊ ընագրից հետո գրիչը վերստին ընդօրինակել է երկու հատված՝ Գ, ա-բ և ժզ գլուխները՝ համապատասխանաբար «Պատմութիւն վասն Մահմետին» և «Ապստամբութիւն հայոց և Մահմետին գալն ի Հայս և առումն Սեանայ և մահ Մահմետին» խորագրերով (էջ 283ա-288բ): Համեմատությունը ցույց է տալիս, որ այս հատվածներն օրինակված են ոչ թե մի ուրիշ ձեռագրից, կամ գրչի նախընթաց ընդօրինակությունից, այլ՝ նույն մայր օրինակից (bil ենթախմբի մյուս ձեռագրերի համեմատությամբ Ե-ն որոշ սխալներ ու բացթողումներ ունի, որոնց մի մասը այս հատվածներում չկա): Այսպիսով, նշված հատվածները կարող են Ե-ի հետ մեկտեղ օգտագործվել ԱՊ ըննական ընագիրը կազմելիս:

ՍՍՀՄ ԳԱ Արևելագիտության ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքի հայերեն ձեռագիր № С—59 (l): Մաշտոցի անվ. Մատենադարանում պահպանվում են ԱՊ ընագրի լուսանկարները (№ 61): Մանր բոլորգիր: Պարունակում է Եվսերիոսի Եկեղեցական պատմությունը (էջ 4ա—118բ), Հովսեպոսի Հրեական պատերազմը (119ա—286ա), ԱՊ (286բ—364ա), Գրիգոր Ակնեցու Պատմությունը (365ա—375բ), Կոստանդիանոս կայսեր թուղթը Շապուհին (375բ—376բ) և ԺԶ—ԺԷ դդ. երկու փոքրիկ հիշատակարան (376բ): Ունի բազմաթիվ հիշատակարաններ: Գրիչները շորսն են՝ Ստեփանոսը, Գասպար երեցը, Հովսեփ դպիրը և Մարտիրոս քահանան: Սկսած ԱՊ-ից մինչև ձեռագրի վերջը գրել է Մարտիրոս քահանան: Լ-ի գրչության թվականը նշված է Գասպար երեցի երկու հիշատակարաններում՝ «ԹՎին ՌՃԻԷ, ի ամսոյն մայիս Ժ» և «ԹՎին ՌՃԻԷ, ի ամսոյն յունիս Ա» (էջ 57ա, 88բ): Այսպիսով, ընդօրինակումը կատարվել է 1678 թ.: Ձեռագրի պատվիրատուն բազմաթիվ հիշատակագրություններում հիշատակված Վարդան Բաղիշեցին է՝ ԺԷ դարի նշանավոր ժամանակագիրը և հո-

67 E. Boré, նշվ. աշխ., էջ 285: Ի դեպ, է. Բորեն և Հ. Չամուրչյանը բարեկամներ են եղել (տե՛ս Կ. Կոստանեանց, նշվ. աշխ., էջ 30):

68 Մանրամասն նկարագրությունը՝ Գաղյան, 1895, էջ 424—426:

69 Մեսրոպ Մազխարոս, նշվ. աշխ., էջ 1551:

70 ՏՃ՝ս Գաղյան, 1895, էջ 424, 1897, էջ 68:

գևոր գործիչը: Հիշատակարաններից երևում է նաև, որ ընդօրինակումը կատարվել է Սպահան քաղաքում<sup>71</sup>: ԱՊ բնագիրն Վ-ում բերականորեն ընտիր է. գրիչ Սարտիրոսը միայն շնչին սխալներ ու բացթողումներ է արել:

Երուսաղեմի Սբոց Հակոբյանց վանքի մատենադարանի ձեռագիր № 375 (նշանակում ենք յ): Մանր նոտագիր, գրիչ՝ Վարդան Յունանեան, գրված է Հայոց ՌՃԼԳ (1685) թ.<sup>72</sup>: Պարունակում է Բնազննություն, ԱՊ և Գրասխանակերացու Հայոց պատմությունը: Բնագրերն էջակալված են առանձին-առանձին, ԱՊ-ը՝ էջ Գ-ՃԾԳ: Ձեռագիրն ունի երեք ուշ հիշատակարան, որոնցից երկուսը՝ թվագրված (1718 և 1740 թթ.)<sup>73</sup>: Վ-ի մասին մեր տեղեկությունները, բացի նորայր եպիսկոպոսի վերոհիշյալ նկարագրությունից, գալիս են նաև նույն հեղինակի մի հոդվածից, ուր ներկայացված են ԱՊ այս բնագրից քաղված մի քանի հատվածներ<sup>74</sup>: Եղած նյութը լիովին բավարար է այս ձեռագիրը Բ խմբի bil ենթախմբին դասելու համար:

Տյուրինգենի պետական համալսարանի գրադարանի ձեռագիր № Ma XIII 69: Ունի 172 թերթ, գրվել է 1833 թ., գրիչ՝ Տեր Ղազարով (Տէր Ղազարեան)<sup>75</sup>: Նկարագրության մեջ բնագրի մասին տրվում են նաև հետևյալ տեղեկությունները. 1. Մովսես Կաղանկատվացի անունը շունի (ինչպես վերը նշեցինք, այս հատկանիշը բնորոշ է ԱՊ բոլոր հին ձեռագրերին և նրանցից կատարված հարազատ ընդօրինակություններին). 2. հիմնականում նման է Մ. էմինի հրատարակությանը, սակայն նրանից տարբերվում է գլուխների բաժանումով. հաճախ այլ են գլուխների վերնագրերը, երբեմն՝ ավելի ընդարձակ, երբեմն՝ համառոտ. այսպես, բացակայում է 14-րդ գլխի սկիզբը և ամբողջ 18-րդ գլուխը (պետք է մտածել, որ այստեղ խոսքը Ա, Ժդ և Գ, ժը գլուխների մասին է. վերջինը Մ. էմինի հրատարակության նման ունեն միայն Ա, Ե ենթախմբի ձեռագրերը. ինչ վերաբերում է Ա, Ժդ-ին, ապա այդ գլխի սկիզբը շունենալը ցույց է տալիս, որ ձեռագիրը պատկանում է Բ խմբի օրինակներին). 3. դրա փոխարեն ձեռագիրն ունի Վաչագան արքայի հրամանը, որ հրատարակության մեջ չկա (անկասկած, խոսքն Ա, իսկ գլխի մասին է. Բ խմբի ձեռագրերում այդ գլխի վերնագիրն է. «Յայնժամ առնէր հրովարտակ քաղալորն ընդ ամենայն կողմանս իւրոյ տէրութեանն օրինակ զայս») և գլխում տրվում է Վաչագանի հրամանի բնագիրը. Ա խմբի ձեռագրերում գլխի վերնագիրն է. «Յուղթ արքային Վաչագանայ...» և գլխում հրամանի վերաշարադրությունն է երրորդ դեմքով. ուրեմն այս տեղեկությունն էլ խոսում է ձեռագրի՝ Բ խմբին պատկանելու օգտին). 4. 20 և 24-րդ գլուխներն ավելի մանրամասն են (խոսքն, ըստ երևույթին, Գ, ի և իդ գլուխների մասին է. իսկապես, հնագույն ձեռագրից թերթ ընկած լինելու հետևանքով Ա խմբի օրինակները Գ, ի-ում պակաս ունեն, իսկ Գ, իդ-ում

71 Օրինակ. «Յիշել աղաշեմ զմեղապարտ Վարդան բանի սպասաւոր զԲաղիշեցիս՝ զստացող այսմ պատմագրոցս, որ բազում աշխատութեամբ գտի զօրինակն և կտու գրել ի քաղաքն Եսպանան յիշատակ հոգոյ իմոյ և ծնողաց...» (էջ 121ա):

72 Ն. Պողարեան, Մայր ցուցակ ձեռագրաց Սբոց Յակոբեանց, հ. Բ, Երուսաղէմ, 1967, էջ 299:

73 նույն տեղում, էջ 299—300:

74 Ն. Եպս. Մովսէս. Աղուան գրողներ, «Սիոն», 1968, էջ 244—247:

75 F. N. Finck und L. Gjandschezian. Verzeichnis der armenischen Handschriften der Königlichen Universitätsbibliothek, Tübingen, 1907, S. 108:

Աջ ենթախումբը և Մ. էմինի հրատարակությունը որոշ նախադասություններ դուրս են թողել): Այսպիսով, բոլոր տվյալները խոսում են այն մասին, որ Տյուրինգենի ձեռագիրը պատկանում է Բ խմբին: Քանի որ նկարագրողները լրացուցիչ հինգ գլուխների գոյությունը չեն արձանագրել, ուրեմն ձեռագիրը պատկանում է Բ խմբի ոչ թե ԵՄ<sub>1</sub>, այլ b1l ենթախմբին (դժվար է մտածել, թե 1833 թ. ընդօրինակված ձեռագիրը կարող է մի երրորդ ճանապարհով հանգել Բ խմբի մայր օրինակին): Գրչի անվան ձևը՝ «Տէր Ղազարով», հուշում է, որ նա ուսասհայ է եղել: Կարելի է նշել, որ 1833 թ. b1l ենթախմբի մեզ հայտնի օրինակներից Արևելյան Հայաստանում գտնվում էր միայն Ե-ն (էջմիածնում): Ամենայն հավանականությամբ, հենց վերջինից էլ ընդօրինակված է Տյուրինգենի ձեռագիրը:

b, i, l և Տյուրինգենի ձեռագրերը մենք առանձնացնում ենք որպես Բ խմբի առանձին՝ b1l ենթախումբ, որովհետև, ինչպես երևում է բնորոշ տարրն-թերցումների քննությունից, այդ ձեռագրերը հանգում են մի ընդհանուր մայր օրինակի: Այսպես, b, i և l ձեռագրերը Գ, ի գ գլխի սկզբում ունեն. «Արդ, զի էր (b՝ ի փխ զի էր) պատճառ լուսաւորութեան մերում սուրբն Եղիշէ» այն դեպքում, երբ a-ն և ԵՄ<sub>1</sub>-ը ունեն. «Արդ, զի առաջին պատճառ լուսաւորութեան մերոյ է սուրբն Եղիշայ»: Այս ենթախմբի b և l ձեռագրերի ընթերցումների՝ a, c, r ձեռագրերի նման ընթերցումներից տարբերվելու տասնյակ այլ օրինակներ կարելի է գտնել ԱՊ նոր հրատարակության տողա-տակում:

ԵՄ<sub>1</sub> ենթախումբ:

ՄՄ ձեռագիր № 2561 (c): Բոլորգիր, գրիչ՝ Սիմոն, տեղ՝ Ամարաս, ժամա-նակ՝ 1664 թ., պատվիրատու՝ Պետրոս Աղվանից կաթողիկոս, ստացող՝ Ամա-րասի առաջնորդ Բարսեղ արքեպիսկոպոս<sup>76</sup>: ԱՊ բնագրից անմիջապես հետո գրված է Հացունյաց խաչի պատմությունը (էջ 241ա—259ա): Ապա հետևում են գրչի համառոտ և ընդարձակ հիշատակարանները (259ա—262ա): Ընդար-ձակում մասնավորապես ասվում է. «Շնորհօք ամենազօրին Աստուծոյ եղև կատարումն այսմ լուսա(ղա)րդ և ներբողունակ մատենիս ի շրջաբերութեան թուականիս Հայագնի ի Ռ. ի Ճ. ի Փ. և չ Գ. ամին: Ի հայրապետութեան աշ-խարհիս Աղուանից տեան Պետրոսի երջանկափառ կաթողիկոսի, վերադի-տողի մեծի աթոռոյն Գանձասարայ...: Գարձեալ հա գրել (Պետրոսը—Ա. Լ.) յոլով գրեանս, յորոց մինն է և զայս պատմագիրք, զոր ի վաղուց հետէ սպա-ռեալ էր ի տանէս Աղուանից և գտեալ եղև ի ձեռն լուսաւոր հոգի Ղուկաս վարդապետին (Պետրոսի ուսուցիչն է—Ա. Լ.), զոր հա վերստին գրել և օրի-նակել վերոյգրեալ հայրապետս<sup>77</sup>: ...Արդ, ...յիշեցէք ի սուրբ աղօթս ձեր զառաջ-նորդ սուրբ ուխտեայս, կորովամիտ և հանճարապատում Բարսեղ արհի կաթու-կոպոսն, որ ստացող եղև զայս ներբողունակ մատենիս, ... ընդամին և միարան՝ տեղոյս ...Ընդ որոց և զիս՝ զՍիմոն, լոկ անուամբն բանի սպասաւորս յիշել ժտիմ, որ զսակաւ յիշատակարանս գրեցի...»: 262 ա-ը էջերի վրա մի հետա-գա ձեռք գրել է Աղվանից կաթողիկոսների ցանկը՝ սկսած Մարկոսից, որը հա-

<sup>76</sup> Նանրամասն նկարագրությունը՝ Գաղյան, 1895, էջ 338—339:

<sup>77</sup> Վ. Առաքելյանը սխալմամբ կարծում է, թե Ե-ի ստացողը եղել է Ղուկաս վարդապետը (Կաղանկատուացի, էջ 1<sup>թ</sup>):

չորդել է ԱՊ մեջ հիշված վերջին՝ Մովսես կաթողիկոսին, մինչև «Տէր Իսրայէլ Մեծկունէից, որ այժմ վարէ ժողովուրդս. ՌՄԺԲ (1763)»: Սիմոն գրիչը որոշ սխալներ ու բացթողումներ է արել: Այսպես, Ա, ա գլխի վերնագիրն է. «Նախերզան սակս պատմութեան Աղաւթից» (փխ Աղուանից), Ա, գ-ում պակասում է «Յառաջ քան զգալ կենարարին մերոյ» (7, 9) արտահայտութիւնը և այլն<sup>78</sup>:

Վենետիկի Մխիթարեան մատենադարանի ձեռագիր N 1485 (նշանակում ենք V<sub>1</sub>): Այս ձեռագրի մասին մեր պատկերացումներն ամբողջովին հանգում են Չ. Դովսեթի խիստ համառոտ նկարագրութեանը<sup>79</sup>: Օրինակը Վենետիկ է տեղափոխվել Մադրասից, 1835 թ.: Թվագրված չէ: Պարունակում է. Մատթեոս Ուսհայեցի (էջ 1—283), Մեսրոպ Երեց (284—322), ԱՊ (323—533), հատված Կիրակոս Գանձակեցուց (533—537)<sup>80</sup>, հատված Սամվել Անեցուց (541—553): ԱՊ բնագիրը խճճված է և պակասներ ունի՝ ձեռագրի թերթերի անկանոն դասավորութեան հետեանքով<sup>81</sup>: Մեսրոպ Մագիստրոսը, որ տեսել է այս ձեռագիրը, հայտնում է, որ այն գրված է նոսր գրով, և թվագրում է ԺԸ-ԺԹ դդ.<sup>82</sup>: V<sub>1</sub>-ը պատկանում է Բ խմբի ձեռագրերին, որ իրավացիորեն արձանագրել է դեռևս Չ. Դովսեթը: Քանի որ այն ունի Գանձակեցուց բաղված գլուխները, ուրեմն վերաբերում է Ը և Դ ձեռագրերի ենթախմբին: Դա երևում է նաև Չ. Դովսեթի թարգմանութեան տողատակերից, ինչպես նաև՝ 1849 թ. «Բաղմավկայում» հրատարակված ԱՊ մի հատվածի բնորոշ տարրնթերցումներից, հատված, որը Վենետիկի Մխիթարյանները պետք է վերցրած լինեին կամ V<sub>1</sub>-ից, կամ՝ վերջինիցս օրինակված V<sub>2</sub> ձեռագրից<sup>83</sup>: Հաշվի առնելով V<sub>1</sub> ձեռագրի համեմատաբար հին լինելը, մենք այն պայմանականորեն հանգեցնում ենք ենթախմբի մայր օրինակին<sup>84</sup>:

Բրիտանական քանգաւրանի գրադարանի ձեռագիր N Or. 5261 (r): Մաշտոցի անվ. Մատենադարանում պահվում է այս ձեռագրի մանրածապավենը (N 362): Բոլորգիր է, որոշ մաշված հատվածներ վերականգնված են շղագրով<sup>85</sup>: Գրչի հիշատակարան շունի: Ֆ. Կոնիբերը, ինչպես գրչութեան առանձնահատկութիւններից, ձեռագիրը թվագրում է ԺԶ դարով<sup>86</sup>: Չ. Դովսեթն այս թվագրութիւնը շատ վաղ է համարում և նշում է, որ ձեռագրի գիրը նման է 1628 թ. օրինակված մի ձեռագրի գրչութեանը<sup>87</sup>:

78 Վ. Առաքելյանի կարծիքով, Ը-ից են ընդօրինակված Բ խմբի բոլոր ձեռագրերը, որն այդ պատճառով կոչված է Ը խումբ (Կաղանկատուացի, էջ 17, ե, նԱ): Իրականում Ը-ից կատարված որևէ ընդօրինակութիւն մեզ չի հասել:

79 The History, p. XI, n. 5—6.

80 Իրականում, Գանձակեցուց բաղված այս հատվածը ԱՊ տվյալ բնագրի մի մասն է: ԸրV<sub>1</sub> ենթախմբի բոլոր ձեռագրերում այդպես է:

81 The History, p. XI, n. 6; XIV.

82 Մեսրոպ Մագիստրոս, նշվ. աշխ., էջ 1552:

83 «Մենամարտութիւն Բարկայ Սիւնոյ ընդ Հոնին», «Բաղմավկայ», 1849, էջ 180—181:

84 Չ. Դովսեթի տված ոչ լիակատար տարրնթերցումները բավական շնորհ V<sub>1</sub>-ի ծագումը (Ը-ից կամ Դ-ից, թե՛ նրանց մոտից) ճշգրիտ որոշելու համար:

85 Նկարագրութեանը՝ F. C. Conibear, A Catalogue of the armenian Manuscripts in the British Museum, L., 1913, p. 292—293:

86 Նույն տեղում, էջ 293:

87 The History, p. XI, n. 5.

1ա էջի վերևի աջ անկյունում շղագրով գրված է. «Ի վանկոթին Յովհաննէս վարդապետին, որ ի Գանձասար»: էջի ներքևում նույն շղագրով գրված է. «Ի 74<sup>88</sup> թուականութեան Լայոց գրեցեալ է այս պատմութիւնս ի Մովսէսէ վարդապետին Կաղանկատուացոյ»: 3ա էջի ներքևում նույն շղագրով ավելացված է. «Ի հայրապետութեան երից աշխարհացս Աղուանից, այսինքն՝ Աղուանից, Լփնաց և Չորա Տեանն Վիրոյ սրբազնասուրբ կաթողիկոսին և իշխանութեանն Վարազ Գրիգորի գրեցաւ այս պատմութիւնս ձեռամբ Մովսէս վարդապետի Կաղանկատուացոյ. որ է Վարունկաթաղ: Ի 74 թուականութեան Լայոց, որպէս Բ հատորն. 14 գլուխն յայտնէ»: 93բ էջում Ա.Պ Բ, ժա գլխի «չանդիման մեծ գեղին Կաղանկատուաց, որ և նմին յնտի գաւառի, յորմէ և էս» արտահայտութեան կողքին լուսանցքում նույն Հովհաննէս վարդապետի շղագրով ավելացված է. «Ի թու(ականութեան) Լայոց 74»:

Ձեռագրի յուրաքանչյուր թերթի առաջին էջի աջ լուսանցքում մի այլ շղագրով գրված են տառեր, որոնք թերթ առ թերթ միացնելով՝ մի քանի անգամ ստանում ենք Բաղդասար միտրոպոլիտի անունը և տիտղոսները տարբեր համառոտութեամբ («Վի-ճա-կա-ւոր առաջ-նորդ Ղա-րա-բա-ղու Շա-բույ և Քալի-շու Արք եպիս-կո-պոս Լա-յոց և աս-պետ Բաղ-տա-սար Գա-նիէլ Բե-կեան Լա-սան Զա-լա-լեանց»): Այս վանկարկված լուսանցագրութեանից պարզ է դանում, որ ձեռագիրը պատկանել է Բաղդասար միտրոպոլիտին, այսինքն՝ Ե-ը գրականութեանից և հիշատակարաններից լավ հայտնի այն ձեռագիրն է, որին հանգում են բազմաթիվ ընդօրինակութեաններ<sup>88</sup>: Այս նույն շղագրով են վերականգնված բուն բուլոբգրի մաշված մասերը:

Հետագայում ձեռագիրը պատկանել է Բաֆֆուն: Յբ էջի լուսանցքում մի երրորդ շղագրով նշված է. «Բաֆֆիի գրչագիրների ժողովածուից»: 1897 թ. Բաֆֆու կինը ձեռագիրը վաճառել է Բրիտանական թանգարանին<sup>89</sup>: Վերջին էջում գնորդի գրութեանն է. «245 folios, June 1897»:

5-րդ թերթի առաջին երեսի վերջին երկու տողը և երկրորդ երեսի բուն բուլոբգիրը մաշված է և ամենևին չի երևում, սակայն բնագիրը վերականգնված է Բաղդասար միտրոպոլիտի շղագրով (հատված է Ա, գ գլխից): Համեմատութեանից երևում է, որ վերականգնման մայր օրինակը պատկանում է ՇՄՂ ենթախմբին: Ընդ որում, դա Ե-ն չէ, որովհետև բնագրում առկա է Ե-ում պակասող «չառաջ քան զգալ կենարարին մերոյ» արտահայտությունը: Վերականգնման մայր օրինակն, ըստ երևույթին, Տ և Չ ձեռագրերի մայրն է, որն ինքը ժամանակին ընդօրինակված պիտի լինի Ե-ից: Ե-ի բուլոբգիրն ամբողջովին մաշված է նաև Տա էջում: Բնագիրը (հատված Ա, գ-ից) վերականգնված չէ: Նշված երկու պակասները չեն եղել ՏՉ-ի մայր ձեռագրի ընդօրինակության ժամանակ և արդեն եղել են Ե ձեռագիրն օրինակելիս (1848 թ.):

Ե-ի վերջից մի քանի թերթ է ընկել, որի հետևանքով արդեն Ֆ. Կոնիբերի ժամանակ պակասում էր բնագրի մի մեծ հատված՝ Գ, ի գլխի «յեզր Եփրատ

<sup>88</sup> Այս թվերը Ֆ. Կոնիբերը սխալմամբ կարդացել է որպես հայերեն Կ և Վ՝ տվյալ դեպքում անհնաստ տառեր (նշվ. աշխ., էջ 293):

<sup>89</sup> Ե.րեմն սխալվում է Ն. Ակինյանը՝ Բրիտանական թանգարանի օրինակի կողքին Բաղդասար միտրոպոլիտի ձեռագիրը գնելով (նշվ. աշխ., էջ 13):

<sup>90</sup> F. C. Conibear, նշվ. աշխ., էջ 293:

գետոյ իջուցանէ» (332,18) հատվածից մինչև ԵՄՆ Լնթախմբի ունեցած հինգ լրացուցիչ գլուխներից շուրջորդի կեսը: Ե-ին հանգող բոլոր ձեռագրերն ունեն այդ հատվածը, Բաղդասար միտրոպոլիտի վանկարկված լուսանցագրությունն էլ եղել է պակասող թերթերի վրա, հետևաբար վերջիններիս կորուստը տեղի է ունեցել ԺԹ դարի երկրորդ կեսին:

Ե-ի անհայտ գրիչը հազվագեպ է սխալվել, սակայն առկա սխալները կարևոր են այս ձեռագրից կատարված ընդօրինակությունները պարզելու համար: Ա, ժա գլխի երրորդ նախադասության սկիզբն է. «Եւ ահա թուի ինձ...» փխ մյուս հնագույն ձեռագրերի «Եւ ահ անկաւ ինձ...» ընթերցման (18,1): Բ, ծգ գլխում «այժմ ունի կին ոմն՝ Մարիամ անուն Շամբորեցի» հատվածում Ե-ն ունի «Մարամ» ընթերցումը (285,16):

Վենետիկի Մխիթարյան մատենադարանի ձեռագիր № 1146 (նշանակում ենք V<sub>2</sub>): Այս ձեռագիրը համառոտ նկարագրել են Մեսրոպ Մագիստրոսը և Չ. Գովսեթը: Ըստ առաջինի, այն պարունակում է հետևյալ հիշատակարանը. «Զընտիր օրինակ պատմութեանս գաղափարեցաւ ի բոլորգիր օրինակէ, զոր առարեալ էր առ մեզ ի 1842 ի Ղարապաղ Պաղղասար եպիսկոպոս Հասան-Ջալալեան»<sup>91</sup>: Ինչպես տեսանք, Բաղդասարի ձեռագիրը Ե-ն է: Սակայն, ըստ Չ. Գովսեթի, V<sub>2</sub>-ն օրինակված է V<sub>1</sub>-ից, բայց ունի ընթերցումներ Ղարաբաղի ձեռագրից, որը 1842-ին Հասան Ջալալյան եպիսկոպոսի կողմից ուղարկվել է Վենետիկ, ապա՝ վերագրարձվել. ընդ որում, Ղարաբաղի ձեռագրից վերցված հատվածները նշված են V<sub>2</sub>-ի լուսանցքներում (Չ. Գովսեթը դրանք ներկայացնում է Չ տառով)<sup>92</sup>: Պիտի եզրակացնել, որ V<sub>2</sub>-ը հավասարապես ընդօրինակված է V<sub>1</sub>-ից և Ե-ից:

ՄՄ ձեռագիր № 8035 (e): Նոտրգիր<sup>93</sup>: Պատկանել է Աղգագրական ընկերությանը, որի կնքադրոշմը կա պահպանակի վրա: Վերնագիրն է՝ «Պատմութիւն Աղուանից, արարեալ ի Մովսիսէ Կաղանկատուացոյ» (1ա): Վերջում ունի հետևյալ ընդարձակ հիշատակարանը. «Ի կայսրութեան ռուսաց նիկողայոսի, որ տիրէր նա և ամենայն սահմանաց Հայոց և Վրաց, ի հայրապետութեան Տեառն Ներսիսի Աստուածընտիր կաթողիկոսի ամենայն Հայոց, արքեպիսկոպոսութեան և ի մետրապօլիտութեան Աղուանից Տէր Բաղդասարայ Հասան Ջալալեանց, ևս՝ Ներսէս Տէր Բարսեղեան Արովեանց Օձնեցի, աշակերտ Սարգիս վարդապետի Հասան Ջալալեանց, գտայ ընդ նմին ի Ղարաբաղ, որ կարգեալ կայր ի բնութիւն վասն հոգևորական գործոյ աշխարհին Արցախու և Աղուանից ցշունարակերտ քաղաքն, ի սմին դիպօղ ժամու արտագրեցի դայս պատմութիւնս Աղուանից՝ Մովսէս Կաղանկատուցի անուանեալ: Արդ, աղաչիմ զընթերցողս լիշել դիս յաղօթս ձեր, զի և դուք լիշեսչիք առաջի Աստուծոյ յաւերժ ուրախութեամբ: Ի թուին Փրկչին ի 5 սեպտեմբերի 1848 ամի. և ի Հայոց՝ 1297. ի քաղաքն Շուշի» (344բ): Համեմատությունը ցույց է տալիս, որ Ե-ն ընդօրինակված է Ե-ից: Գրիչը կրկնել է մայր օրինակի վերը նշված սխալները Ա, ժա-ում և Բ, ծգ-ում և

<sup>91</sup> Մեսրոպ Մագիստրոս, նշվ. աշխ., էջ 1552: Վենետիկի հետ Բաղդասար Հասան-Ջալալյանցի կապերի մասին հայտնում է նաև Սարգիս Ջալալյանցը («Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան», Կ. Բ, Թիֆլիս, 1858, էջ 355):

<sup>92</sup> The History, p. XI, n. 7, XII:

<sup>93</sup> Նկարագրությունը՝ Մեսրոպ Մագիստրոս, նշվ. աշխ., էջ 1553: Կաղանկատուացի, էջ Ե:

պահպանել բուն գիրը ջնջված լինելու հետևանքով Ա, գ և զ գլուխներում եղած պակասները: Գրիչը բաց է թողել միայն լրացուցիչ Գ, իե-իը գլուխները:

ՄՄ ձեռագիր № 8057 (s): Շղագիր<sup>94</sup>: Պահպանակի վրա կան Ազգագրական ընկերության կնքադրոշմը, ուսերեն վերնագիրը և մի նշում. «Из рукописей Якова Давидовича Лазарева»: Այնուհետև՝ հայերեն. «նվեր Մարիամ Լազարեանից»: Չեռագիրը շունի գլխացանկեր: Վերջում կա հիշատակարան. «Այս պատմագիր արտագրեցաւ ի պատճէնէն, յորչորջելոյ Պատմութիւն Աղուանից, զոր գրեալ էր յ74 ամին Հայոց Մոսէս վարդապետն Կաղանկատուացի: Ի 1855 ամի Փրկչին և 1304 Հայոց»: Գրութեան տեղը և գրիչը հայտնի չեն:

Փարիզի Ազգային գրադարանի հայերեն ձեռագիր № 220 (Ք<sub>4</sub> 220. նշանակում ենք զ): Մաշտոցի անվ. Մատենադարանում պահվում է այս ձեռագրի մանրածապավենը (№ 881): Շղագիր<sup>95</sup>: Պահպանակի վրա գրված է հետևյալ նամակը. «Յարգելի Իվան Ստեփանիչ! Ահա ձեր ուղած ձեռագիրն, որոյ մէջ կայ Աղուանից պատմութիւնը. այսպիսի ազգային թանգարան չէք գտնիլ. այս պատմութիւնիցը գանազան կան: Բայց կատարեալն ու ճիշտը սա է: Ներէք, վրագ դուրս էի գալիս, շկարողացի առանձին նամակագրիլ: Ն. Աթաբէկեան: 6 սեպտ. 1857 ամի: Շուշի»: Առաջին գրքի ցանկից առաջ կա հետևյալ նշումը. «Յամի ազգական ՌՅԶ և փրկչական 1857 ամի, ի 5-ին Յունիսի» (էջ 1): 6-րդ էջում գրված է. «Ի թախանին Հայոց յօթանասուն և շորս և ի հայրապետութեան երից աշխարհացս Աղուանից, Լիւնաց և Չորայ Տեառն Վիրոյ կաթուղիկոսին գրեաց Պատմութիւնս Աղուանից Մովսէսն Գաղանկատուածոյ վարդապետն, այսինքն է Վարանկաթաղեցի»: Վերջում ունի հետևյալ հիշատակարանը. «Յամի ազգական ՌՅԶ և փրկչական 1857 պարզագրեցաւ պատմութեանս այս Սիւնեաց վիճակին, Ղափանու գաւառին, ի գելոյն Ոչաքան, ձեռամբ Սողոմոնի հոր ձ. Վեզիրեանց՝ ծառայողի Գրիգորի Տաթևացոյն տիեզերալոյս վարդապետին, ի 19 յուլիսի, ի քաղաքն Շուշի» (էջ 559): Այսպիսով, գրիչը Սողոմոն Վեզիրյանցն է: Ընդօրինակումն սկսվել է Ղափանի գավառի Ոչաքան գյուղում<sup>96</sup> և ավարտվել Շուշիում:

1855 և 1857 թթ. օրինակված Տ և Ղ ձեռագրերն անկասկած հանգում են Ե-ին: Նրանք կրկնում են Ե-ի սխալները Ա, ժա և Բ, ծգ գլուխներում, երկուսում էլ կան Ե-ի մեջ Հովհաննես վարդապետի գրանցած նշումների հատվածները, որոնցում հիշվում են հայոց 74 թվականը և Մովսես Կաղանկատուացի-Վարունկաթաղեցին: Մակայն, ի տարբերություն ավելի վաղ գրված Ե ձեռագրի, սրանց մեջ Ա, գ և զ գլուխները լրիվ են: Այս հանգամանքը ասիպում է եզրակացնել, որ Տ-ը և Ղ-ն օրինակված են ոչ թե անմիջապես Ե-ից, այլ՝ մի ձեռագրից, որը ժամանակին ընդօրինակվել է Ե-ից: Այդ ենթադրելի օրինակի գրութեան ժամանակը պետք է նշանակել Հովհաննես վարդապետի (որի մասին առայժմ ոչինչ ասել չենք կարող) ժամանակի և 1848 թվականի (Ե-ի ընդօրինակման տարվա) միջև:

Այսպիսով, ԵՄ<sub>1</sub> ենթախմբի մեջ մտնում են Ը, Դ, Ն<sub>1</sub>, Ն<sub>2</sub>, Ե, Տ և Ղ ձեռագրերը: Դ-ից պատճենվել են նաև ներկայումս կորած երկու ձեռագիր՝ Մարգիս Զա-

<sup>94</sup> նկարագրությունը՝ Կաղանկատուացի, էջ ԽԱ:

<sup>95</sup> նկարագրությունը՝ F. Macler, նշվ. աշխ., էջ 119, Մեսոպ Մագիստոս, նշվ. աշխ., էջ 1553:

<sup>96</sup> Ըստ Վ. Աթաբէկյանի՝ Վաշական (Կաղանկատուացի, էջ ԽԲ):

լալյանցի օրինակը և Գալուստ Շերմաղանյանցի հավաքածուի № 190-ը: Ենթախմբի հիմնական առանձնահատկությունը ԱՊ բնագրի մեջ մտցված հինգ լրացուցիչ գլուխների առկայությունն է: Բ, ծ գլխին ծԱ. թվահամարի տակ հետևում է «Վասն պատուական գլխոյն Յովհաննու Մկրտչին. թէ որպէս բերաւ ի գաւառն Արցախս և եղաւ ի սուրբ Գանձասար, որ է աթոռ Աղուանից» վերտառութեամբ մի գլուխ (Բ գրքի վերջին գլուխները կրում են համապատասխանաբար ծԲ և ծԳ համարները): Սա մի պատմություն է Հովհաննես Մկրտչի նահատակության, նրա գլխի գլուտի և Ջալալ Դոլա Հասան-Ջալալյան իշխանի կողմից Գանձասար տեղափոխվելու մասին, որը առանձին չի պահպանվել<sup>97</sup>: Մյուս չորս հավելվածային գլուխները դրված են ԱՊ բնագրի վերջում և ունեն հետևյալ գլխահամարները և խորագրերը. «ԻԵ<sup>98</sup>. Վասն կոտորածին, որ ի կողմանս Խաչենոյ և վասն բարեպաշտ իշխանին Ջալալին», «ԻԶ. Վասն եկեղեցոյն, որ շինեաց մեծ իշխանն Ջալալ Դոլա Հասանն ի Գանձասար», «ԻԷ. Վասն մահուանն բարեպաշտ իշխանին Ջալալ Դոլա Հասանոյն», «ԻԸ. Վասն մահուան իշխանին Շահնշահի և որդոյ նորին Ջաբարէին»: Ենթախմբի մայր օրինակի գրիչը այս գլուխները բառացի քաղել է Կիրակոս Գանձակեցու Հայոց պատմությունից (հմմտ. Կ. Մելիք-Օհանջանյանի հրատարակության Լ, ԼԱ, ԿԳ և ԿԴ գլուխները): Ամբողջ նյութը վերաբերում է Գանձասարին և այն շենացնող Հասան-Ջալալյան իշխաններին: Կարելի է ենթադրել, որ ՇՄՆ-ի մայր օրինակը կազմվել է Գանձասարի նոր վերևի շրջանում՝ ժՁ դարի սկզբին, երբ Ազգանից կաթողիկոսարանը ձալեթից տեղափոխվեց Գանձասար<sup>99</sup>: Ենթախումբը բազմաթիվ ուրվմեծ ու փոքր բնորոշ տարրնթերցումներ, սխալներ և պակասներ ունի, որոնք ներկայացված են ԱՊ նոր հրատարակության տողատակում:

### Ներկայումս անհայտ ձեռագրեր:

Այսպիսի երկու ձեռագրի մասին արդեն խոսք եղավ վերը: Դրանք էին՝ ՄՄ № 1351 պատառիկի ձեռագիրը, որի մեծագույն մասը ներկայումս անհայտ է, և Արմաշի վանքի № 61 ձեռագիրը, որի մասին մեր պատկերացումները հենվում են Հ. Թովմյանի մանրամասն նկարագրության վրա: Մենք պարզ պատկերացում կարող ենք կազմել նաև Սարգիս Ջալալյանցի ձեռագրի մասին, քանի որ նրանից հրատարակվել են ընդարձակ հատվածներ<sup>100</sup>: Դրանցում արտացոլված բազմաթիվ բնորոշ տարրնթերցումները ցույց են տալիս, որ ձեռագիրը հանդում է Դ-ին: Այդ մասին գրում է նաև Ս. Ջալալյանցը. «(Բաղդասար միտրոպոլիտը) առաքեաց ի վանս Վենետիկոյ առ Սուրբաս Արք Եպիսկոպոսն Սոմա-

97 Վ. Առաքելյանը հրատարակել է իրեն հավելված (Կաղանկատուացի, էջ 348—350):

98 Ենթախմբի ձեռագրերի Գ գրքի ցանկում ժԸ գլխի վերնագրի («Ի գրենոյն Ստեփաննոսի...») կողքին երկու թվահամար (ժԸ և ժԹ) դրված լինելու հետևանքով վերջին գլուխների համարները մեկով անել են, և Կաթողիկոսացանկը կրում է ԻԳ թվահամարը: Գրիչները բնագրում ուղղել են ենթախմբի մայր օրինակի այդ սխալը, սակայն թողել են լրացուցիչ գլուխների գլխահամարները՝ ԻԵ-ԻԸ:

99 Յ. Շակիարունեանց, Ստորագրութիւն Կաթողիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. Բ, էջմիածին, 1842, էջ 344; Մ. Բաբխուատունեանց, Աղուանից երկիր և դրացիք (Միջին Գաղստան), Թիֆլիս, 1893, էջ 252:

100 Ս. Ջալալեանց, նշվ. աշխ., հ. Բ, էջ 217—222, 234—239, 248—255, 261, 319—330, 334—336, 345—349, 352, 370—375, 381, 384—388, 391—393, 426, 471—479:



լեանց զնշանաւոր գումար և բնկալաւ ի նմանէ զգիր շնորհակալութեան հանդերձ մի մի օրինակօք մատենիւք տպեցելովք ի նոյն վանս, ուր ընդ նոսին միալորեալ և զգրչագիր մատեանսն իւր յօրինեաց զճոխ գրատուն ի պետս վերժանութեան ուսումնասիրաց. յորոց և ես արտագրեցի զգատաստանագիրս Գօշ Մխիթարայ, զՄաշտոց ձեռնադրութեան կուսանաց, զՊատմութիւն Աղուանից, զՄեկնութիւն Յորայ, և զքանի մի հարկաւոր թուղթրս»<sup>101</sup>:

Շեքմազանյանցի հավաքածուի N° 170 և 190 ձեռագրեր: Գալուստ Շերմազանյանցի ձեռագրերի հավաքածուի անտիպ նկարագրութեան մեջ հիշատակուում են ԱՊ երկու ձեռագիր: Հավաքածուի N° 170-ի մասին ասվում է. «Պատմութիւն Աղուանից ի Մովսիսէ Կաղականտացոյ մինչև ի տասներորդ դարն: Քառածալ. օրինակեալ ի Ռէթուականի Հայոց»<sup>102</sup>: Եթէ դա իսկապես եղել է 1558 թ. կատարված ընդօրինակութիւն, ապա մեզ մնում է խորապես ափսոսալ իր հնությամբ միայն Ձ-ին դիչող ԱՊ այդ օրինակի կորստի համար: Հավաքածուի N° 190-ի մասին նկարագրութեան մեջ ասվում է. «Պատմութիւն Աղուանից. օրինակեալ ի գաղափարէն Բաղասար մետրոպոլիտի Հասան Զալալեան»<sup>103</sup>, ուստի և այն օրինակվել է Ե-ից: Շեքմազանյանցի ձեռագրերը, շնչին բացառութեամբ, հրդեհի ճարակ են դարձել<sup>104</sup>:

#### ԱՊ հրատարակութիւններ:

Մ. Էմինի հրատարակութիւնը կատարվել է վերը նկարագրված III և IV ձեռագրերի հիման վրա<sup>105</sup>: Ինչպես նշում է Վ. Առաքելյանը, կարելի է միայն գարմանալ, որ հրատարակիչը երկու օրինակն էլ համարում է անթվակիր<sup>106</sup>:

Կ. Շահնազարյանի հրատարակութեանը հիմք ծառայած ձեռագրերի մասին աշխատասիրողը գրում է հետևյալը. «Տպագրութիւն մատենիս եղև շորից օրինակաց համեմատութեամբ. յորոց զառաջինն բազում զգուշութեամբ գաղափարեալ էի ես ինձէն ի ս. էջմիածին, ի մտի ունելով միշտ զտպագրութիւն այնորիկ ի պատեհ ժամու: Զերկրորդն նոյնպէս օրինակեալ ի ս. էջմիածին, ընծայեաց ինձ ազգասիրաբար Մեծապատիւ գիտնական Մկրտիչ աղայն Մոմճեան՝ բարեկամն իմ. զերրորդն՝ գրեալ ի Գաւրէժ յայլ իմն ձեռագրոյ, ետ ինձ համեմատութեան աղագաւ արգոյ բարեկամն իմ Գրիգոր էֆենտին Մարկոսեան, և զչորրորդն՝ գաղափարեալ ի Կոստանդնուպոլիս, ետ ինձ պատուարժան Գալուստ աղայն Տէր Պօղոսեան: ...Զսրտառուշ ողբն Դաւթակայ քերթողի արարեալ ի մահն Զեանշիրի, պակասեալ ըստ կիսոյն յերկրորդ և ի շորրորդ օրինակս մեր, անթերի ունէին առաջին և երրորդ օրինակքն»<sup>107</sup>: Մանոթագրութիւններում Կ. Շահնազարյանը տալիս է ձեռագրերի որոշ տարբերութիւններ, ցավօք, շնչ-

101 Նույն տեղում, էջ 355:

102 «Յուցակ գրչագիր մատենից Գալուստի Շերմազանեանց, ժողովեալք ի միչոցս 30-ամաց ձանապարհորդութեան իւրոյ», ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 228, վավ. 17, էջ 16ա:

103 Նույն տեղում, էջ 17բ:

104 Հ. Ս. Անասյան, Հայկական մատենագիտութիւն, Ե-ԺԸ դդ., հ. Ա, Երևան, 1959, էջ LXXXI:

105 Էմին, էջ 61:

106 Կաղանկատուացի, էջ 1Թ: Ինչպես վերևում տեսանք, Ո-ը իսկապես անթվական է, սակայն III-ը թվագրված է 1835 թ.:

107 Շահն., հ. Ա, էջ 85:

շելով ձեռագրի պայմանական համարը: Այնուամենայնիվ, դրանց բնությունը ցույց է տալիս, որ Շահնագարյանի ձեռագրերը պատկանել են ԱՅ և ԱՆ ենթախմբերին. բնդ որում, տարրնթերցումները հիմնականում 2—2 կամ 3—1 հարաբերակցությունն ունեն: Իհարկե, ԱՅ ենթախմբին են պատկանել Շահն. 1 և Շահն. 3 ձեռագրերը, որոնցում Դավթակի ողբը լրիվ էր: Շահն. 3-ը, ամենայն հավանականությամբ, Ք<sub>1</sub> 217 ձեռագիրն է, իսկ Շահն. 1-ը պետք է օրինակված համարել Ս պատառիկի ձեռագրից (համենայն դեպս, այն չի կարող ընդօրինակված լինել ժԹ դարի կեսերին էջմիածնում գտնված ՚ կամ ձ<sub>1</sub> ձեռագրերից, քանի որ Շահնագարյանի հրատարակության մեջ արտացոլված շեն առաջինի պակասները, իսկ երկրորդի բնորոշ շեղումները հրատարակիչը վերագրում է միայն մեկ ձեռագրի, որը պետք է լինի ձ<sub>1</sub>-ից պատճենված Ք<sub>1</sub> 217-ը): Շահն. 4-ը, ամենայն հավանականությամբ, եղել է Արմաշի վանքի ձեռագիրը (վանքի հավաքածուն սկսել է կազմվել 1880-ական թվականներից<sup>108</sup>): Այս ենթադրության օգտին խոսում է այն փաստը, որ Կ. Շահնագարյանի տված ծանոթագրությունների մեջ կան դեպքեր, երբ երեք ձեռագիր ունեն ԱՅ ենթախմբին, իսկ մեկը՝ ԱՆ ենթախմբին բնորոշ ընթերցումներ (ինչպես վերը նշեցինք, Արմաշի ձեռագիրն ամենայն հավանականությամբ սկսել են ընդօրինակել Պ<sub>1</sub>-ից և շարունակել՝ Շահն. 2-ից, ուր Դավթակի ողբը կիսատ էր): Վերջապես, Շահն. 2-ն ընդօրինակվել է էջմիածնում, 1846 թվականից առաջ, է-ից, կամ նրան հանգող որևէ օրինակից:

Ք. Պատկանյանը ԱՊ-ը թարգմանել է վերը նկարագրված Ա ձեռագրից<sup>109</sup>: 1848 թ. Լազարյան ձեռարանի հրատարակած մի քրեստոմատիայում տպագրվել է ԱՊ երկու հատված (Բ, ա և ժբ գլուխները)<sup>110</sup>: Համեմատությունը ցույց է տալիս, որ հրատարակության հիմքը եղել է վերը նկարագրված Ո ձեռագիրը:

1849 թ. «Բաղմավեպ» հանդեսում հրատարակվել է մի փոքրիկ հատված ԱՊ Բ, ա գլխից (109, 13—110, 18)<sup>111</sup>: Ինչպես վերը նշեցինք, հրատարակիչներն օգտագործել են կա՛մ Վ<sub>1</sub>, կա՛մ Վ<sub>2</sub> ձեռագրերը:

1852 թ. Կոստանդնուպոլսի «Նոյան աղավնի» շաբաթաթերթում հրատարակվել է Դավթակի ողբի առաջին կեսը<sup>112</sup>: Բնագիրը՝ առաջաբանով, Պոլիս էր ուղարկել Մսեր Գրիգորեան Չմիռնացին (Մսեր Մսերյանց): Նա իր ձեռագրի մասին ոչինչ չի հայտնել, սակայն համեմատությունը պարզ ցույց է տալիս, որ հատվածը հանգում է Ո ձեռագրին: Նույն շաբաթաթերթի 1853 թ. ապրիլի 18-ի համարում (№ 58, էջ 3) հրատարակված է Ողբի երկրորդ կեսը՝ ուղարկված նույն թղթակցի կողմից: Համեմատությունից երևում է, որ հատվածը չի ծագում մեր ձեռքի տակ եղած ձեռագրերից: Պետք է ենթադրել, որ այն հանգում է Ս պատառիկի ձեռագրին, կամ վերջինիցս կատարված ինչ-որ մի ընդօրինակու-

108 Յ. Թովհեան, նշվ. աշխ., էջ 5:

109 «История арван...», с. IV.

110 «Ընտիր հատուածք, քաղեալք ի գրոց նախնի և արդի մատենագրաց Հայոց: Հանդերձ բառագրովք ի հայկականէ ի սուաց բարբառ», Մասն Ա, Մոսկվա, 1848, էջ 60—68:

111 «Մենամարտութիւն Բարկայ Սիւնոյ բնդ Հոնին», «Բաղմավեպ», 1849, էջ 180—181:

112 «Մահ օրհասական Չիւանշիրի մեծի իշխանին: Հանեալ ի Պատմութենէն Աղուանից, գրելոյ ի Մովսիսէ վարդապետէ Կաղանկատացոյ (Հատոր Բ, գլ. 17)», «Նոյեան աղանի», թ. 36 (8 նոյ. 1852), էջ 2—3, թ. 37 (15 նոյ.), էջ 3:

թյան (Մսեր Մսերյանցը, որ Մոսկվա էր տեղափոխվել էշմիածնի ճեմարանում սովորելուց և աշխատելուց հետո, կարող էր իր հետ վերցրած լինել Թ-ի ձեռագիրը):

1860 թ. Մոսկվայում լույս տեսնող «Ճոարադ» հանդեսում Գալթակի ողբը ամբողջությամբ, առաջաբանով հրատարակել է Զարմայր Մսերյանցը<sup>113</sup>: Համեմատությունից պարզ է դառնում, որ հատվածի աղբյուրը նույն այն ձեռագիրն է, որից քաղված էր «Նոյեան աղավնու» երկրորդ կտորը: Եղած որոշ տարբերությունները պետք է համարել հրատարակչական միջամտության արդյունք:

ԱՊ մի շարք հատվածներ հրատարակել է Ղևոնդ Ալիշանը. ինչպես արդեն պարզաբանել է Չ. Գովսեթը, նրա ձեռքի տակ եղել է ոչ թե ինչ-որ ընտիր ձեռագիր, ինչպես համարում էր Հր. Աճառյանը, այլ Մ. էմինի հրատարակությունը<sup>114</sup>:

#### Հատվածներ ԱՊ-ից:

ՄՄ № 2966 և 3062 ձեռագրերում պահպանվել է հատված ԱՊ Ա, ժա գլխից՝ «Սկիզբն Պատմության Աղուանից, որով պարծինն: Սրբոյ Վաչէի ի Գիւտայ եպիսկոպոսէ լի երկնաւոր շնորհօքն Աստուծոյ ողջոյն: Յետ սկզբանն զկնի առաջաբանութեան ինչ» վերնագրով («Արդ յորմէ երկուցեալն էի... տղայոցն կալ առաջի» 18,13—21,28)<sup>115</sup>: Այս հատվածի ընթերցումների մի մասը համընկնում է ԱՊ ձեռագրերի Ա, մյուս մասը՝ Բ խմբի բնորոշ տարրնթերցումների հետ: Սրանից հետևում է այն կարևոր եզրակացությունը, որ հատվածը սկզբնապես քաղված է ԱՊ այնպիսի օրինակից, որն անկախ է եղել ձեռագրերի Ա և Բ խմբերից:

ՄՄ № 579 ձեռագրում արտագրված է ԱՊ Գ, ժդ գլուխը միևնույն՝ «Միբայնի Աղուանից հայրապետի խնդիր յաղագս պապանձմանն Զարարիայ մարգարէի և ծննդեան և յարութեան Փրկչին. ընդդէմ երկարնակաց» վերնագրի տակ<sup>116</sup>: Այս հատվածի ընթերցումները ևս համընկնում են մեկ Ա, մեկ Բ խմբի ձեռագրերի տարրնթերցումների հետ, հետևաբար այն հանգում է այդ խմբերից անկախ օրինակի: Այս հատվածը շենք կարող անմիջապես հանգեցնել Կաղանկատվացու աղբյուրին՝ Միբայնի կաթողիկոսի երկին, քանի որ նրանում շենք գտնում ո՛չ հեղինակային առաջաբան, ո՛չ էլ որևէ բառ, որը չլիներ ԱՊ ձեռագրերում: Բացի այդ, նիկիայի ժողովի մասնակից Երուսաղեմի Մակար եպիսկոպոսը այս հատվածում ևս կոչված է «Մարկոս», իսկ այդ սխալը կատարված պետք է համարել, ամենայն հավանականությամբ, ԱՊ հեղինակի և ոչ թե Միբայնի կաթողիկոսի գրչի տակ:

<sup>113</sup> Չ. Մսերեանց, Տեղեկութիւն ի վերայ Զուանչիւր իշխանի և Գալթակ ճարտասանի, «Ճոարադ», 1860, էջ 76—86:

<sup>114</sup> Ղ. Ալիշան, Հայագատում, Վենետիկ, 1901, հ. Բ, էջ 220—226: Հմմտ. The History, p. XI, n. 7 (p. XI—XII).

<sup>115</sup> ՄՄ № 2966 (Ժէ դար), էջ 120ա-բ; ՄՄ № 3062 (ԺԸ դար), էջ 199ա-բ: Սրանք թղթերի հայտնի ժողովածուներ են, որ գրականության մեջ երբեմն կոչվում են «էշմիածնական Գիրք իղից» (նկարագրութիւնը՝ Գ. Տէր Մկրտչեան, Անանիա Մոկացի. «Արարատ», 1897, էջ 95—96; Յ. Գիւլիսանդանեան, «Գիրք թղթոցի» պակասները և նրանից դուրս մնացած թղթեր. «Արարատ», 1902, էջ 561—563):

<sup>116</sup> ՄՄ № 579 (ԺԳ դար), էջ 80բ—82բ:

ՄՄ № 4284 ձեռագիրը ի թիվս այլ նյութերի պարունակում է նաև ԱՊ Գ, ժք գլխի լրիվ բնագիրը՝ «Սակս աւերման Իլիոնի և շինելոյն Հառմա» վերնագրի տակ<sup>117</sup>: Այս հատվածի ընթերցումներն էլ համընկնում են մերթ Ա, մերթ Բ խմբի ձեռագրերի բնորոշ տարրնթերցումներին, հետևաբար այն սկզբնապես արտագրվել է ԱՊ Ա և Բ խմբերից անկախ մի ձեռագրից:

Հայկական բազմաթիվ ճառընտիրներում կա Գրիգոր Լուսավորչի թոռ Գրիգորիսի նշխարների գյուտի պատմութունը, որ քաղված է ԱՊ-ից և ընդգրկում է նրա Ա, Ի-ից գլուխներն ամբողջութամբ<sup>118</sup>: Այդ սյուժեին սովորաբար նախորդում է Գրիգորիսի կյանքի և նահատակության պատմութունը, որը քաղված է Փավստոս Բուզանդից: Նշված հատվածի վերնագիրը՝ «Գիւտ նշխարաց Երանելոյն Գրիգորիսի Աղուանից կաթողիկոսի, որ վկայեաց յաշխարհն Մազքթաց ի ձեռաց Սանեսանայ (որոշ ձձ՝ Սանեսայ—Ա. Հ.)» գրեթե նույնանուն է ԱՊ Ա, ի գլխի վերնագրի հետ: Որպես առանձին հատվածի գրված խագիր, ճառընտիրներում պահպանված է նաև Ա, իր գլխի վերնագիրը: Ա, իա գլխի վերնագիրը պահպանվել է միայն երկուսում (Վենետիկի Բ և Գ ճառընտիրներ), իսկ մյուսներում միացված է բնագրին: Մի շարք ճառընտիրներում սրանցից բացի կա նաև ԱՊ մի ուրիշ հատված՝ Ա, ժթ գլուխը, իր վերնագրով. «Յայտնութիւն նշխարաց սրբոյն Չաբարիայի՝ հարն Յովհաննու, և Երանելոյն Պանդալեոնի, որ վկայեաց ի նիկոմիդեա քաղաքին, զոր տարեալ էր մանկանն Գրիգորիսի յաշխարհն ճղբաց»<sup>119</sup>:

Բնագրերի համեմատութունը ցույց է տալիս, որ արդեն ժԲ դարի ճառընտիրներում առկա այս հատվածները հիմնականում համընկնում են Բ խմբի ձեռագրերի ընթերցումներին: Կան նաև Ա-ին համընկնող ընթերցումներ, սակայն՝ քիչ ու անկարևոր, և կարող են անգամ համարվել պատահական նմանության արդյունք: Այսպիսի հարաբերակցութունից կարելի է անել երկու հետևություն. կա՛մ մայր ճառընտրի գրիչն օգտվել է Բ խմբի ձեռագրից (այդ դեպքում Բ-ի մայր օրինակը պիտի կազմված լինի ժԲ դարից ոչ ուշ), կա՛մ նա օգտվել է Ա և Բ խմբերից անկախ մի ձեռագրից (այս դեպքում պիտի ընդունենք, որ Ա խմբի մայր օրինակը կազմելիս ԱՊ, Ա, ժթ-ից գլուխները լուրջ խմբագրման են ենթարկվել): Ըստ ամենայնի, ավելի հավանական է թվում երկրորդ հնարավորութունը, ուստի և մենք ճառընտիրների նշված հատվածները հանգեցնում ենք ԱՊ սկզբնագրին Ա և Բ խմբերի ձեռագրերից անկախ:

ՄՄ № 6577 ձեռագրում քիչ բան ասող «Աղուանից» խորագրի տակ կա ԱՊ բովանդակութունը ներկայացնող մի համառոտութուն (էջ 159ա-բ): Մի բանի բնորոշ տարրնթերցումներ ցույց են տալիս, որ այս համառոտութունը կազմվել է ց ձեռագրի հիման վրա: Ըստ Մատենադարանի ձեռագրացուցակի

<sup>117</sup> ՄՄ № 4284 (ժէ դար), էջ 48բ—50բ: Ձեռագիրը պարունակում է աշխարհագրական, բնագիտական, տոմարագիտական, փիլիսոփայական, քերականական, դավանաբանական զործեր («Ցուցակ ձեռագրաց», հ. Ա, Երևան, 1965, էջ 1185):

<sup>118</sup> ՄՄ № 3787 (ժԳ դար), էջ 429ա—438բ; ՄՄ № 6196 (ժԳ դար), էջ 153բ—158ա; Վենետիկի Մխիթարյան մատենադարանի № 200 (ճառընտիր Ա, ժԳ դար), էջ 121բ<sub>2</sub>—125բ<sub>2</sub>; № 201 (ճառընտիր Բ, ժԲ-ժԳ դդ.), էջ 204բ<sub>2</sub>—210բ<sub>2</sub>; № 202 (ճառընտիր Գ, ժէ դար), էջ 642ա—546ա: Վերջիններն ըստ՝ Բ. Սարգիսեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, Վենետիկ, 1914, հ. Բ, էջ 9, 47—48, 112:

<sup>119</sup> ՄՄ № 6195, էջ 151բ—153բ; Վենետիկ, № 200 (ճառընտիր Ա), էջ 120ա<sub>1</sub>—121բ<sub>2</sub>:

(Տ. Բ, էջ 347)՝ № 6577-ը գրվել է 1786 թվականից առաջ, ուրեմն, կարող ենք ավելացնել՝ 1761-ի և 1786-ի միջև:

ԱՊ-ից հատվածներ կան նաև ՄՄ № 4442 ձեռագրում, որը կազմվել է 1870—1891 թթ., Երուսաղեմում, Կոստանդնուպոլսում և այլուր<sup>120</sup>: Առաջին էջում նշվում է. «Այս ընդօրինակութիւն՝ ի նուստոր Պատմութիւնէ Աղվանից՝ արարեալ ի Մովսիսէ Կաղանկատուացոյ պատմագրէ, զոր ի լոյս ընծայեաց... արժանայիշատակ Կարապետ վարդապետ Շահնազարեան ի Փարիզ...»:

Վիեննայի Մխիթարյան մատենադարանի ձեռագիր № 324-ում, որ գրվել է Կիլիկիայում, 1305 թ., ներկայացված են ԱՊ Գ, ա-բ գլուխները «ՅԱղուանից պատմութիւնէն. Պատմութիւն վասն Մահմետի» վերնագրի տակ, որից ընդարձակ կտորներ է հրատարակել Ն. Ակինյանը (290, 1—15, 291, 4—5, 292, 6—14)<sup>121</sup>: Համեմատությունից պարզ երևում է, որ այս հատվածն էլ վերցված է ԱՊ ձեռագրերի Ա և Բ խմբերից անկախ մի օրինակից:

ՄՄ № 1725 (b) ձեռագրի մասին խոսելիս նշեցինք նաև նրա մեջ առկա մայր օրինակից ծագող ԱՊ հատվածի գոյությունը, որն ընդգրկում է Գ, ա-բ և ժզ գլուխները:

Վերջապես, ԱՊ-ից ծագող հատվածների կողքին պետք է դնել նաև Ուխտանեսի և Անանիա Սանահնեցու երկերում պահպանված կարևոր բաղվածքները: Ժ դարի վերջերին, այսինքն Մովսես Կաղանկատուացու ժամանակից մի փոքր անց, Ուխտանեսը հնարավորություն է ունեցել իր երկի մեջ մուծել ԱՊ Ա, գ-է և Բ, խէ գլուխները<sup>122</sup>: Անանիա Սանահնեցու (ԺԱ դար) «Բան հակաճառութեան ընդդէմ երկարնակաց» աշխատության Ը գլխում կան ԱՊ Բ, խէ գլխի առաջին և Բ, խը գլխի երկրորդ կեսերը՝ «Ի չաղուանից պատմութիւնէն» և «Պատճառ բաժանման Վրաց» ենթավերնագրերի տակ<sup>123</sup>: Ինչպես և պետք էր սպասել, համեմատությունից պարզվում է, որ Ուխտանեսի և Անանիայի ձեռքի տակ եղել են Ա և Բ խմբերից անկախ ձեռագրեր: Նույնը պետք է արձանագրել էաև ԺԳ դարում Մխիթար Գոշի և Կիրակոս Գանձակեցու ունեցած ԱՊ օրինակների մասին<sup>124</sup>:

#### ԱՊ Ա և Բ խմբերի առանձնահատկություններ:

Խ. Գաղյանը, որն առաջին անգամ իրավացիորեն առանձնացրել է ԱՊ ձեռագրերի Ա և Բ խմբերը, դրանք տարբերակում է երկու հիմնական հատկանիշներով: Առաջին. Բ խմբի ձեռագրերը Գ, ի գլխում ունեն մի հատված, որը Ա-ի մեջ չկա՝ հնագույն ձեռագրից թերթ ընկած լինելու պատճառով: Երկրորդ. Ա, Բ, Գ, Ը և իգ գլուխներում կան հատվածներ, որտեղ երկու խմբերում առաջացել են տարբեր ընթերցումներ՝ հնագույն ձեռագրում Ղունկիանոսի միջամտության հետևանքով, ընդ որում, ԱՊ սկզբնագրին համապատասխանում են Բ խմբի

<sup>120</sup> «Յուցակ ձեռագրաց...», Տ. Ա, էջ 1214:

<sup>121</sup> Հ. Յ. Վ. Տաշեան, նշվ. աշխ., էջ 770: Ն. Ակինեան, նշվ. աշխ., էջ 338—340:

<sup>122</sup> Ուխտանես եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871, Տ. Բ, էջ 122—124, 131 (գլուխ ԳԵ, ԿԹ): Հեղինակը որոշ շափով վերաշարագրել է նաև ԱՊ Բ, խը գլխի տեղեկությունները (գլուխ ԿԳ-ԿԴ):

<sup>123</sup> ՄՄ № 567, էջ 83ա—85բ: Այս երկը պարունակող ձեռագրերի և նրա խմբագրությունների մասին տե՛ս Հ. Ս. Անաչյան, նշվ. աշխ., Տ. Ա, էջ 778—782:

<sup>124</sup> Ղ. Ալիշան, նշվ. աշխ., Տ. Բ, էջ 384—385: Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց: Աշխ. Կ. Ա. Մելիք-Յանջանյանի, Երևան, 1961, էջ 192—199:

ընթերցումները<sup>125</sup>: Չ. Գովսեթը նշվածներին ավելացնում է մի երրորդ հատկանիշ. նրա կարծիքով, Բ խումբը («համենայն դեպս՝ P<sub>4</sub>-ը և Բրիտանական թանգարանի ձեռագիրը») պարունակում է Բ, ծա գլուխը, ուր Հովհաննես Մկրտչի գլխի պատմությունն է<sup>126</sup>: Ուսումնասիրողն այս հարցում սխալվում է, քանի որ նշված գլուխն առկա է Բ խմբի միայն ՇԿՆ<sub>1</sub> ենթախմբի ձեռագրերում: Անհաշող է նաև Ֆ. Մամեդովայի ենթադրությունը, ըստ որի՝ Բ խմբի ձեռագրերում առկա է Գավթակի ողբի երկրորդ կեսը<sup>127</sup>: Սակայն Ա և Բ խմբերի տարբերություններն էականապես չեն արտացոլում նաև Խ. Գաղյանի նշած հատկանիշները: Այդ երկու տարբերություններն էլ առաջացել են միայն ԺԷ-ԺԸ դարերում՝ արհեստական ճանապարհով: Ներկայումս հայտնի է Ա խմբի մի ձեռագիր՝ Խ-ը, որն օրինակվել է Ձ-ից 1761 թվականից առաջ և զերծ է իր մայր օրինակի՝ Խ. Գաղյանի նշած երկրորդ թերությունից: Կարելի է հուսալ, որ երբևէ կհայտնաբերվեն 1676 թվականից առաջ Յ-ից ընդօրինակված ձեռագրեր, որոնք զերծ կլինեն նրա՝ նաև առաջին թերությունից:

Ա և Բ խմբերի իրական տարբերությունը բնագրի բազմաթիվ անխաթար հատվածների տարբերություններն են, որոնց մի մասը, անկասկած, խմբագրական փոփոխությունների հետևանք է<sup>128</sup>: Գրանցից թերևս ամենակարևորը գտնվում է Ա, ժգ գլխում: Բ խմբի ձեռագրերը շունեն այդ գլխի առաջին մասը (նոր հրատարակության մեջ՝ 3 էջ), ուր պատմվում է Գրիգոր Լուսավորչի և Հայոց դարձի մասին: Համապատասխանաբար Բ խմբում գլխի վերնագիրն էլ ավելի համառոտ է. «Ձեռնագրութիւն սրբոյն Գրիգորիսի և ևկն յԱղուանս լուսաւորելն և նահատակութիւն նորին և բերումն նշխարացն» փոխանակ Ա-ի «Սակաւիկ յայտարարութիւն վասն սրբոյն Գրիգորի՝ Հայոց լուսաւորչի, և երանելի որդաց նորին. և ընդ նմին ձեռնադրութիւն սրբայն Գրիգորիսի՝ որդոյ վրթանիսի, թոռին մեծին սրբոյն Գրիգորի ի կաթողիկոսութիւն Աղուանից և Վրաց. և ևկն նորա յԱղուանս ի լուսաւորութիւն աշխարհիս և նահատակութիւն նորին և բերումն նշխարացն» վերնագրի<sup>129</sup> (այսինքն՝ Բ-ն ունի Ա-ի միայն ընդգծված հատվածները): Քննությունը պարզորոշ ցույց է տալիս, որ Ա<sup>9</sup> սկզբնագրից

<sup>125</sup> Գաղյան, 1897, էջ 67—70:

<sup>126</sup> The History, p. XIV:

<sup>127</sup> Փ. Мамедова, указ. соч., с. 25:

<sup>128</sup> Հմմտ. Կաղանկատուացի, էջ 17-18:

<sup>129</sup> Անդրադառնալով այս տարբերությանը, Ֆ. Մամեդովան ենթադրում է, թե Ա<sup>9</sup> սկզբնագրին համապատասխանում է Բ խմբի վերնագիրը (Փ. Дж. Мамедова. Текстологический анализ «История албан» Моисея Каланкатуйского, «Бартольдские чтения 1981 года». Тез. докл.: М., 1981, с. 55), սակայն քննությունը չի հաստատում այդ ենթադրությունը: Ի դեպ, տեղին է անդրադառնալ նշված թեզիսներում ուսումնասիրողի կատարած մի շարք սխալներին: 1. Չգտելով ցույց առալ, թե Ա<sup>9</sup> բնագիրը Մ. էմինի և Կ. Շահնազարյանի կողմից նպատակադրված խմբագրման է ենթարկվել, Ֆ. Մամեդովան գրում է, որ հրատարակությունների մեջ Ա, ժգ-ի վերնագիրն ընդարձակված է իր ձեռքի տակ գտնվող Ա խմբի երկու (Անինդրագիր В—56 և P<sub>1</sub> 217) ձեռագրերի համեմատությամբ, ուր առկա է համառոտ «Յայտարարութիւն սակաւիկ յաղագս սրբոյն Գրիգորի՝ Հայոց լուսաւորչի և երանելի որդեացն, և ընդ նմին՝ որդրոյն Գրիգորիսի ձեռնագրութիւն և ևկն յԱղուանս, և լուսաւորելն դսա և նահատակութիւն նորին և բերումն նշխարացն» վերնագիրը: Զարմանալի պնդում: Վերցնելով այս վերնագիրը В—56 ձեռագրի Ա դրբի գլխացանկից (էջ 291բ. այդպես ունեն նաև Ձ-ի և Ա խմբի մյուս օրինակների գլխացանկերը. ի դեպ, P<sub>1</sub> 217-ը գլխացանկեր և այս վերնագիրը չունի!), ուսումնասիրողը չի՞ նկատել, որ իր երկու ձեռագրերի բնագրերում էլ (այդպես՝ նաև Ա խմբի մյուս օրինակներում) վերնագիրն ընդարձակ է, այսինքն՝ ճիշտ այնպիսին, ինչպիսին ներկայացված է հրատար

շեղվածք Բ խմբի տարրերակն է: Նախ՝ Բ խմբում գլուխն սկսվում է Ա խմբի հատվածին փոխարինող հետևյալ ծանոթությունով: «Որ ինչ սակս երիցս երանելոյն Գրիգորի՝ Լայոց լուսաւորչի պատմութեան՝ Ազաթանգեղոս ուսուցիչ. իսկ զոր առ Աղուանս կատարեաց գործ ընդ ձեռն մանկանն Գրիգորիսի, գտանի յայսմ մատենի»: Ընդգծված բառերը կրկնում են Ա-ի բնագրի առաջին նախադասության մեջ Գրիգոր լուսավորչին նվիրված ավելի ընդարձակ բնորոշման կեսը («մինչև եկն հռչակելին պատերազմողն և երիցս երանելին Գրիգորիոս»): Երկրորդ, գլխի Ա խմբի ունեցած հատվածն իր լեզվով ու ոճով ամբողջովին համապատասխանում է գլխի երկրորդ մասի լեզվին ու ոճին: Դա տվյալ հատվածում Կաղանկատվացու բառացի արտագրած աղբյուրի՝ «Վաշագանի վեպի» լեզուն ու ոճն է<sup>130</sup>: Երրորդ, եթե ենթադրենք, թե նախնականը Բ խմբի տարրերակն է, ապա պետք է մտածենք, որ Ա-ի մայր ձևագրի գրիչը՝ ելնելով Ազաթանգեղոս անունից, կաղմել է Ազաթանգեղոսի պատմության մի համառոտություն: Այնինչ, գլխի սկիզբը որոշակի տարբերություններ ու անձանոթ մանրամասներ ունի Ազաթանգեղոսի՝ Ժ դարից շատ առաջ կանոնացված բնագրի համեմատությամբ: Իրականում այդ տարբերություններն ու մանրամասները «Վաշագանի վեպի» հեղինակի ստեղծագործության արդյունքն են, որը, ի թիվս այլ պատճառների, Զ դարում իր ձևերի տակ պիտի ունենար Լայոց դարձի պատմության մի ուրույն տարրերակ (թերևս՝ Փալստոս Բուզանդի մեզ չհասած առաջին դպրություններից բաղված)<sup>131</sup>: Չորրորդ, թեև Բ-ի վերնագիրը խոսում է միայն Գրիգորիսի մասին, իսկ գլխի սկզբի ծանոթությունը խոստանում է գրել միայն Աղվանքում նրա կատարածի մասին, իրականում գլխի երկրորդ մասում պատմվում է նախ՝ Գրիգոր լուսավորչի, ապա՝ Վրթանեսի, և հետո միայն՝ Գրիգորիսի գործունեության մասին:

Նշված փաստերից ակնհայտ է դառնում, որ ԱՊ սկզբնագիրը փոփոխված է Բ խմբի ձևագրերում: Այդ դեպքում անհրաժեշտ է միանգամից ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ Բ խմբի երկու ենթախմբում էլ Ա, ժդ

բաղությունների մեջ (B—56, էջ 25բ—26ա, P<sub>1</sub> 217, էջ 12բ): 2. Թեղիսների երկրորդ կետում կատարած մի անհաշող պնդմամբ, Բ խմբի բոլոր ձևագրերը հանգեցվում են ՄՄ Ք 1725 (b) ձևագրին: 3. Չորրորդ կետում Յ. Մամեղովան գրում է, թե Լենինգրադի C—59 (1) ձևագրի «Ցանկը առաջնոյ հատորին Պատմութեան Աղուանից ազգին» վերնագիրն ունի նաև P<sub>4</sub> 220 ձևագիրը (նպատակն է՝ ցույց տալ, թե նշված վերնագիրն ունեն Բ խմբի բոլոր օրինակները): Իրապես, P<sub>4</sub>-ը ԵՄ<sub>1</sub> ենթախմբի մյուս ձևագրերի նման ունի «Ցանկ և նախադրութիւն սակս Պատմութեան Աղուանից» վերնագիրը (էջ 1): 4. Ուսումնասիրողը շարունակում է, թե C—59-ի վերը բերված «Աղուանից ազգ» ընթերցումը Բ խմբի ձևագրերում ավելի հաճախ է հանդիպում, քան Ա խմբում: Եվս մի դարմանալի պնդում, որովհետև բերվածից բացի երկրորդ այդպիսի դեպք գոյություն չունի: Այսքան վատ ստուգված (՝) փաստերի հիման վրա ընթերցողին նման լուրջ եզրակացություններ մատուցելը անվավեր անթույլատրելի է:

<sup>130</sup> «Վաշագանի վեպի» մասին, որը մենք թվագրում ենք Զ դարի երկրորդ կեսով, տե՛ս Ն. Ալիևեան, նշվ. աշխ., էջ 142; Կ. Ա. Կադրամանյան, Источники «Истории страны Агванк»: Автореф. дис., канд. ист. наук, Ереван, 1973, с. 22; А. А. Акоюн. Роман об албанском царе Вачагане Благочестивом в «Истории Албании» Моисея Каланкатуйского. «Кавказ и Византия», вып. IV, Ереван, 1984, с. 159—171:

<sup>131</sup> Մանրամասն տե՛ս Ա. Լ. Լակոբյան, Փալստոս Բուզանդի «Լայոց պատմությունը» որպես «Վաշագանի վեպի» աղբյուր, «Ներտասարդ արևելագետների հանրապետական X գիտական նստաշրջան», Զեկուցումների թեզեր, Երևան, 1984, էջ 15:

գլխի բնագիրը կիսատ ու խմբագրված է: Այդ փաստից բխում է այն կարևոր եզրակացությունը, որ *bil* և *ery* ենթախմբերի մայր ձեռագրերն ընդօրինակվել են մեկ ընդհանուր մորից. դա Բ խմբի մեզ չհասած մայր օրինակն է, որի գրիչն էլ նշված և բազմաթիվ այլ խմբագրումների ու բնորոշ տարրնթերցումների աղբյուրն է:

Ա և Բ խմբերի երկրորդ խոշոր տարրերությունն առկա է Ա, ԺԹ-ի գ գլուխներում: Այստեղ, ինչպես իրավացիորեն նշում է Վ. Առաքելյանը, «բնագրերը բոլոր խմբերի այնքան են զանազան, որ երբեմն կարելի է ինքնուրույն բնագրեր համարել»<sup>132</sup>: Հնագույն ճառքնտիրներում այս հատվածի առկայության շնորհիվ հաջողվում է պարզել, որ սկզբնագրից շեղվել և այն խմբագրման է ենթարկել Ա խմբի մայր ձեռագիրը<sup>133</sup>: Սակայն Բ-ն էլ այս հատվածում կորցրել է մի կարևոր մանրամասն, որը Ա-ում մնացել է անխաթար: Ա խմբի ձեռագրերի մեջ Ա, իսկ գլխի վերնագիրն է. «Թուղթ արքային Վաչագանայ առ ամենայն կախկոպոսունս եւ քահանայս առ ի շնորհել նմա ի ձեռն աղաթից եւ պաղատանաց նոցա դժածկեալ գանձն»: Բ խմբում այս վերնագիրը չկա. նրա դերը կատարում է գլխի առաջին նախադասությունը՝ «Յայնժամ առնէր հրովարտակ թագաւորն...»: ԱՊ Ա գրքի գլխացանկերում թե՛ Ա, թե՛ Բ խմբի ձեռագրերն ունեն Ա խմբի բնագրում եղած վերնագիրը՝ «Թուղթ արքային Վաչագանայ...»<sup>134</sup>: Դա ցույց է տալիս, որ ԱՊ սկզբնագրում եղած վերնագիրն անթերի պահպանվել է Ա խմբի ձեռագրերում:

Այս եղանակով, ԱՊ-ից քաղված հնագույն կտորների օգնությամբ, բազմաթիվ այլ հատվածներում էլ հաջողվում է պարզել, թե խմբերից որի ընթերցումն է համապատասխանում սկզբնագրին, այսինքն՝ վերականգնել սկզբնագիրը: Նույն խնդիրն իրագործելուն օգնում է նաև Ա և Բ խմբերի տարրնթերցումների համեմատությունը ԱՊ աղբյուրների հետ: Հասկանալի է, որ սկզբնագրից գալիս է այն ընթերցումը, որը համապատասխանում է Կաղանկատվացու աղբյուրի բնագրին<sup>135</sup>: Բոլոր հնարավոր դեպքերի համար մեր կատարած այս կարգի համեմատությունը թույլ է տալիս եզրակացնել, որ սկզբնագիրն արտադրվելու հարցում Ա և Բ խմբերի արժանիքներն ընդհանուր առմամբ հավասար են:

Վերջապես, մնում է քննել այն հարցը, թե Ա և Բ խմբերի մայր ձեռագրերը ԱՊ սկզբնագրին հանգում են անմիջականորեն, թե՛ միջնորդավորված: Բնագրական մի քանի հակասությունների ըննությունը ցույց է տալիս, որ խմբերի կազմավորումից առաջ Կաղանկատվացու սկզբնագրից օրինակվել է առնվազն մեկ ձեռագիր: Այսպես, Բ, իսկ գլխի սկզբում բոլոր ձեռագրերը, նաև՝ Ուխտանեսի և Անանիա Սանահնեցու մոտ պահպանված հատվածները, պարունակում են հետևյալ արտահայտությունը (աննշան տարրնթերցումներով). «Քառաս-

132 Կաղանկատվացի. էջ 17:

133 Տե՛ս վերը: Ի դեպ, բացառված չէ, որ իսկական իմաստով Ա խմբի մայր օրինակը, այսինքն՝ բնագրի որոշ հատվածներ խմբագրողը, ոչ թե Ձ-ն է, այլ նրա՝ մեզ չհասած մայր ձեռագիրը:

134 Բացառություն է կազմում Վ ձեռագիրը, որի ցանկում նույն վերնագիրն է, ինչ որ բնագրում՝ «Յայնժամ առնէր հրովարտակ...»: Ինչպես երևում է, ուշագիշտ գրիչը ցանկը համապատասխանեցրել է բնագրին:

135 Կարելի է պնդել, որ միակ դեպքը, երբ Կաղանկատվացու աղբյուրների հիման վրա գրիչը փոխել է ԱՊ բնագիրը, Ղուկիանոսի միջամտությունն է:



ներորդ երրորդ ամ էր թուականին Հոռոմոց, չորժամ լուսաւորեցան Հայր ի հաւատս, և Աղուանից լուսաւորութեանն ՄԶ ամ յառաջ»: Ստացվում է, որ Հայոց լուսավորութիւնը տեղի է ունեցել 327 թվականին (284 + 43)<sup>136</sup>, իսկ Աղվանից լուսավորութիւնը՝ դրանից 270 տարի անց, այսինքն՝ 597-ին: Աղվանից լուսավորութեան նման անմիտ թվագրութիւն ոչ մի պատմիչ տալ չէր կարող, առավել ևս՝ Աղվանից պատմութիւն գրողը: Իրականում շատ պարզ է, որ Կաղանկատվացու սկզբնագրում գրված է եղել, թե Աղվանից լուսավորութիւնը՝ կապված Եղիշա առաքյալի գործունեութեան հետ, 270 տարով նախորդել է Հայոց լուսավորութեանը, որն, այսպիսով, կապվել է միայն Գրիգոր Պարթևի գործունեութեան հետ<sup>137</sup>: Ուրեմն, ԱՊ սկզբնագրում պետք է եղած լինի «և Աղուանից լուսաւորութիւնն՝ ՄԶ ամ յառաջ», ճիշտ այնպես, ինչպես վերականգնել ենք ընդհարը Մ. էմինն ու Կ. Շահնաղարյանը<sup>138</sup>: Անհավանական է մտածել, թե Ա. և Բ. խմբերի մայր ձեռագրերը, Ուխտանեսը և Անանիա Սանահնեցին իրարից անկախ, միևնույն ձևով փոփոխել են տվյալ հատվածը: Պետք է ուրեմն եզրակացնել, որ Կաղանկատվացուց հետո նրա ձեռագիրն ընդօրինակվել է մեզ անհայտ գրչի կողմից, որին անհարիր է թվացել քննութեան առարկա արտահայտութիւնը, և նա պարզապես «լուսաւորութիւնն»-ը դարձրել է «լուսաւորութեանն»:

ԱՊ նշված առաջին ընդօրինակութեան հետ պետք է կապել նաև Գ, իր գրչւթում առկա հակասական ընթերցման ծագումը: Այստեղ, Միհրական տոհմի ծագումնաբանութեան հատվածում ասվում է. «քաջ Վարդան, որ հաւատացեալ ի Քրիստոս, և ոչ շինողն Գարդման բերդոյ» (339, 2—3): Իսկ Բ, ժէ գլխում ունենք. «Վարդ ծնանի գրաչն Վարդան, որ շինեաց գրեղն Գարդմանայ գերիս ամս» (172, 4—5): Երկու հատվածում էլ խոսքը նույն Վարդանի մասին է՝ Արմայելի որդի Վարդի որդու և Վարազ-Գրիգորի հայր Վարդի հոր: Դա նշանակում է, որ Գ, իր-ում պիտի եղած լինէր «և ոչ շինողն Գարդման բերդոյ»: Պարզ է, որ հաջորդող «շինողն» բառի առաջին շշական հնչյունի ազդեցութեամբ գրիչը «որ» բառի մեջ «ր» տառի փոխարին պատահաբար «չ» է գրել (առնմանութեան օրենք): Եվ քանի որ այդ ընթերցումն ունեն թե՛ Ա, թե՛ Բ խմբերը, ուրեմն սխալը ծագել է ԱՊ առաջին ընդօրինակողի գրչի տակ:

Երրորդ փաստը, որը միաժամանակ թույլ է տալիս նաև որոշել հուշարձանի ստեղծման ժամանակը, հետևյալն է: ԱՊ վերջին տողում խոսվում է Մովսես կաթողիկոսի մասին. «Տէր Մովսէս ամս 2. յառաջնորդութենէն Փառիսոսայ վանաց»: Հարց է ծագում՝ եթե Կաղանկատվացին իմացել է Մովսեսի կաթողիկո-

<sup>136</sup> Հետ երևույթին «Հոռոմոց թուական» (սկիզբը՝ 247 թ.) ասելով, Կաղանկատվացին կամ նրա աղբյուրը հասկացել է Գիսկղեախանոսի թվականը (սկիզբը՝ 284 թ.): Հակառակ դեպքում՝ Աղվանից լուսավորութիւնը՝ այսինքն Եղիշա առաքյալի գործունեութիւնը, ընկնում է մ. թ. 20 թվականին, երբ Հիսուսը ղեռ կենդանի էր (247 + 43 — 270 = 20), որպիսի սխալ դժվարանում ենք վերագրել Կաղանկատվացուն կամ նրա աղբյուրին:

<sup>137</sup> Այլ հարց է, որ Եղիշան «Հայոց» լուսավորիչ Բաղեսի աշակերտն էր, և, նույն տրամաբանութեամբ, Հայոց լուսավորութիւնն էլ պետք է թվագրվեր մ. թ. Ա դարով: Աղվանից եկեղեցու առաջնահատմութեան ջատագով հեղինակի տրամաբանութիւնն այստեղ հասկանալի պատճառներով հետևողական չէ:

<sup>138</sup> էմին, էջ 214; Շահն., հ. Ա, էջ 405:

սության ավարտի մասին (982—988)<sup>139</sup>, ինչու՞ նա չի գրել նաև հաջորդ կաթողիկոսի անունը: Այս հակասությունը կարելի է լուծել՝ ենթադրելով, թե Կաղանկատվացին չի իմացել և չի հիշատակել Մովսեսի կաթողիկոսության ավարտի մասին, իսկ «Զ» (6) թիվը ԱՊ մեջ ավելացրել է սկզբնագրի առաջին ընդօրինակողը: Եթե մեր ենթադրությունը ճիշտ է, ապա ԱՊ գրության ժամանակն անհրաժեշտ է դնել 982 և 988 թվականների միջև:

Այսպիսով, ներկայումս գոյություն ունեն ԱՊ 28 ձեռագիր: Դրանից բացի, տարբեր ժամանակներում գրականության մեջ արձանագրվել և նկարագրվել են ներկայումս անհայտ 7 ձեռագիր (դրանցից մեկից պահպանվել է պատառիկ, մի քանիսից հրատարակվել են հատվածներ): Հավաստիորեն վերականգնվում են նաև ուրիշ 5 ձեռագրեր՝ Տ և Գ ձեռագրերի մայրը, ԵՂ և ԵԿՂ ենթախմբերի մայրերը, Բ խմբի մայրը և Ա և Բ խմբերի մայրը: ԱՊ ճյուղագրությունն արտահայտում ենք աղյուսակում ներկայացված ձևով:

А. А. АКОПЯН

## СПИСКИ «ИСТОРИИ АЛБАНИИ» МОВСЭСА КАЛАНКАТУАЦИ

### Резюме

В настоящее время существуют 28 списков «Истории Албании» Мовсэса Каланкатуаци (Дасхуранци). Кроме того, в научной литературе встречаются упоминания или описания еще 7 списков, утерянных или ныне неизвестных (сохранились фрагмент одного из них и опубликованные отрывки других).

Уверенно можно предположить существование еще 5 списков, в том числе—архетипа групп А и Б, архетипа группы Б и архетипов обеих подгрупп группы Б.

К статье прилагается таблица генеалогии списков «Истории Албании».

<sup>139</sup> Չ գրքի Աղվանից կաթողիկոսների ժամանակագրությունը կազմելիս պետք է նկատի ունենալ ԱՊ ձեռագրերում առկա հետևյալ երկու սխալները: 1. Գագիկ կաթողիկոսը («Տէր Գագիկ ամս ԺԳ (Ա խումբ՝ ԺԳ-Ա. Հ.)» յնպիսկոպոսութենէն Գարդմանայ. ի սորա շորորդ ամին լցա: թին Հայոց ն») պիտի իշխած լինի ոչ թե 13 տարի (948—961), այլ՝ 10, ինչպես որ նշում է Մխիթար Գոշը (Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 385), քանի որ Անանիա Մոկացու հաղաստի վկայությամբ, նա մահացել է Հայոց նէ (958) թվականին («Տեառն Անանիայի Հայոց կարողիկոսի Յաղագս ապստամբութեան տանն Աղուանից, որ ընդ ժամանակս ժամանակս լեալ իցէ ձեռնադրութիւնն արաքոյ ս. Լուսաւորչի աթոռոյն»: Հրատ. Գ. Տէր Մկրտչեան, Արարատ, 1897, էջ 144): 2. Գագիկին հաջորդել է ոչ թե «Տէր Գալիթ ամս է. յնպիսկոպոսութենէն Կապաղակայ», ինչպես որ վկայում են Ա խմբի ձեռագրերը և ընդունված է գրականության մեջ, այլ հաջորդը՝ «Տէր Գալիթ ամս Զ. յառաջնորդութենէն Փառիսոսայ վանաց. սա առ ձեռնադրութիւն յԱնանիայէ՛ Հայոց կաթողիկոսէ»: Առաջին Գալիթին շունեն Բ խումբը, Գոշը, Գանձակեցին և Մխիթար Այրիվանեցին: Անանիա Մոկացին ևս վկայում է, որ Գագիկի մահվան տարում ինքը Աղվանից կաթողիկոս է ձեռնադրել Գալիթ վանականին (նույն տեղում): Այսպիսով, պետք է դուրս գցել առաջին Գալիթի մասին Ա խմբի համապատասխան առղը՝ որպես 1676 թ. ա-ի վերջին թերթերը վերականգնողների սխալի հետևանք: Նշված ուղղումներից հետո Մովսեսի աթոռակալության շրջանն ընկնում է 982—988 թվականներին:

A. H. HACOBIAN

LES COPIES MANUSCRITES DE "L'HISTOIRE DE L'ALBANIE" DE  
MOVSES KALANKATVATSI

## Résumé

Il existe actuellement 28 copies manuscrites de „L'Histoire de l'Albanie“ de Movses Kalankatvatsi (Daskhourantsi). En outre, les ouvrages scientifiques décrivent ou mentionnent 7 autres copies, perdues ou inconnues (un fragment de l'une d'elles et des passages publiés d'autres copies nous sont parvenus).

On peut supposer avec certitude l'existence de 5 autres manuscrits, dont l'archétype des groupes A et B, l'archétype du groupe B et les archétypes des deux sous-groupes du groupe B.

La table généalogique des copies manuscrites de „L'Histoire de l'Albanie“ est donnée en appendice à l'article.